

Երեսնամյա այսպես

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

«Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսություն ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՐ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ



Հունիսի 18-ին Մայր Աթոռ Սր Էջմիածնի Գեղորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց Առաքելական Սր Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը։ Հայոց Եկեղեցու հաստատած պատվավոր մրցանակն այս տարի շնորհվեց աշխարհահռչակ լեւի կինոռեժիսոր Զեյնուբ Զանուսիին։

Արարողության սկզբում «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի մասնակիցներին եւ հյուրերին ողջունեց Նաթան արք. Հովհաննիսյանը՝ ուրախությամբ անդրադառնալով կինոփառատոնի արձանագրած հաջողություններին, տարեցտարի մասնակիցների թվի ավելացմանն ու աշխարհագրական տարածքի ընդլայնմանը։ Սրբազան հայրն ընդգծեց այն կարեւոր առաքելությունը, որ կինոն ունի մարդու հոգեւոր կյանքի զարգացման գործում, որի առաջամարտիկներից եւ քարոզիչներից է նաեւ կինոարվեստի նվիրյալ Զեյնուբ Զանուսին։

Այնուհետեւ շնորհակալական խոսքով հանդես եկավ կինոփառատոնի հիմնադիր-տնօրէն Հարություն Խաչատրյանը։ Նա շնորհակալություն հայտնեց Հայոց Եկեղեցուն եւ Վեհափառ Հայրապետին՝ մրցանակաբաշխության համար՝ շեշտելով Սր Էջմիածնի մեծ դերակատարությունը մշակույթի եւ արվեստի տարածման գործում։

Մեծարյալի կյանքին եւ գործունեությանն անդրադարձավ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր Դավիթ Մուրադյանը՝ շեշտելով, որ Զեյնուբ Զանուսին ժամանակակից կինոյի փիլիսոփաներից է, մարդ, ով հավատում է հավիտենական արժեքներին եւ իր արվեստի միջոցով քարոզում դրանք։ Նա կարեւորեց նաեւ այն ջերմ ու բարեկամական կապերը, որոնք լեւի կինոռեժիսորն ունի Հայաստանի եւ հայ մշակույթի հետ՝ մասնավորապես խոսելով մեծարյալի եւ 20-րդ դարի խոշորագույն հայ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի մտերմիկ հարաբերությունների եւ վերջինիս արվեստի տարածման գործում նրա անգնահատելի ավանդի մասին։

Ապա Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեղորգյան ճեմա-

րանի տեսուչ Գեղորգ եպս Սարոյանն ընթերցեց հայրապետական վկայագիրը, որից հետո ներկաների բոլոր ծափողջույնների ներքո Ամենայն Հայոց Հայրապետը «Եղիցի լույս» մրցանակը շնորհեց կինոռեժիսոր Զեյնուբ Զանուսիին՝ մշակութային եւ մարդասիրական արժեքների քարոզչության եւ համաշխարհային կինոարվեստում նշանակալի ավանդի համար։

Մրցանակաբաշխությունից հետո իր սրտի խոսքը ներկաներին փոխանցեց անվանի կինոռեժիսորը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ գնահատանքի եւ մշակույթի, կինոյի եւ հավատի միջեւ կամուրջ-

լու բարին ու գեղեցիկը մարդկային սրտերից ներս, կերտելու մարդու հոգեւոր-քարոյական բարձր նկարագիրը, արտահայտելու նրա ներաշխարհի դրսեւորումները՝ առաջադրելով արդի մարտահրավերների հաղթահարման ուղիներ ու նպաստելով մարդկության ընթացքին՝ դեպի խաղաղ, բարեգործ աշխարհ։ ...Մենք բարձրորեն գնահատում ենք Ձեր վաստակաշատ գործունեությունը կինոյի ասպարեզում։ Վավերագրական ու գեղարվեստական ֆիլմերով, ռեժիսորական հիմնալի աշխատանքով Դուք պատվավոր տեղ ունեք կինոասպարեզում։ Խոհափիլիսոփայական ուշագրավ ստեղծագործություններով Դուք խոսում եք աշխարհի ու մարդկանց հետ, հորդորում աստվածապարզեւ կյանքը գնահատելու, երկրավոր այս ժամանակը զուր չվատնելու եւ աստվածահաճո



ներ ստեղծելու համար։ Անդրադառնալով քրիստոնեության համամարդկային նշանակությանը՝ նա նշեց, որ քրիստոնեությունը ներշնչանքի եւ սիրո աղբյուր է, այն ապագան է եւ ո՛չ անցյալը՝ միաժամանակ հույս հայտնելով, որ Զեյնուբի սիրտ վարդապետությամբ լուսավորված մարդն այսուհետեւ նույնպես պիտի շարունակի բարիք արարելու իր կարեւոր առաքելությունը։

Արարողության ավարտին իր հայրապետական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Գոհունակությամբ անդրադառնալով շնորհալի կինոռեժիսորի ստեղծագործական գործունեությանը՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Մարդուն շնորհված արարելու աստվածապարզեւ հատկությունն առավել չափով դրսեւորվում է արվեստի ստեղծագործություններով, որոնցից է նաեւ զարգացման մեծ ճանապարհ անցած կինոարվեստը։ Կինոն՝ որպէս արվեստի ստեղծագործություն, բարձր եւ կարեւորագույն առաքելություն ունի՝ իր ներազդող հզոր միջոցով սերմանե-

գործերով արժեւորելու։ ...Հայրապետիս համար գոհունակություն է նաեւ անդրադառնալ Հայաստանի եւ հայ կինոգործիչների հետ ունեցած Ձեր բարեկամական հարաբերություններին, որոնց հիմքը դրվել է դեռեւս խորհրդային տարիներից։ Այդ ժամանակաշրջանում Դուք նաեւ գովելի ջանքեր ներդրեցիք 20-րդ դարի խոշորագույն հայ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի արվեստի պահպանման եւ միջազգային հանրությանը ներկայացնելու գործում։ Կինոարվեստում պատկառելի Ձեր վաստակն այսօր Դուք հավելում եք կրթական բեղուն գործունեությամբ՝ մասնագիտական Ձեր բարձր գիտելիքները, հարուստ փորձառությունն ու հմտությունները փոխանցելով տարբեր երկրների, այդ թվում եւ Հայաստանի կինոաշխարհի երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին»։

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, բարերար տիար Գաբրիել Զեմբերջյանը, կինոյի, մշակույթի գործիչներ եւ հյուրեր։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սփյուռքահայ ուսուցիչներին

Հունիսի 19-ին Մայր Աթոռ Սր Էջմիածնում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Սփյուռքի նախարարության «Սփյուռք» ամսագրին դպրոցի Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման եւ հայոց լեզվի արագացված ուսուցման դասընթացների մասնակիցներին։

Հանդիպման սկզբում ՀՀ Սփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության պետ Արմեն Անդրեասյանը Նորին Սրբությանը ներկայացրեց ծրագրի նպատակները եւ կատարված աշխատանքները՝ հայցելով Հայոց Հայրապետի օրհնությունը։

Ողջունելով ներկաների այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը փոխանցեց ներկա ուսուցիչներին՝ հորդորելով առավել նախանձախնդրությամբ, ջանասիրությամբ եւ հավատով շարունակել իրենց նվիրյալ եւ պատասխանատու ծառայությունը՝ հայաշունչ ոգով եւ մեր հայրերի հավատքով կրթելով հայ մանուկներին ու պատանիներին։ Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ ուսուցիչների մեջ շատ են հատկապես երիտասարդները, որոնց ներկայությունը հույս է ներշնչում վաղվա օրվա հանդեպ՝ անդրադառնալով Սփյուռքի հայկական գաղթաօջախներում առկա մարտահրավերներին։ Նորին Սրբությանը մասնավորաբար հորդորեց նախանձախնդիր լինել մայրենի լեզվի պահպանման եւ տարածման գործում։

«Հայոց լեզվի իմացությունն այն բանալին է, որը բացում է դռները մեր հարուստ հոգեմտավոր ժառանգության եւ առավելաբար գինում ամենքիս՝ դիմագրավելու համար բոլոր փորձություններն ու խոչընդոտները», - նշեց Հայոց Հայրապետը։

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին։

Հանդիպմանը ներկա էին Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրէն Վարդան վրդ. Նավասարդյանը։





Սկիզբը՝ թիվ 13

Եվ խնդրում է նա թագավորին «հաստատու՝ ամուր պահե՛ գկարմունճն», այսինքն՝ հայոց գործերի հետադարձի ճանապարհը: Ողբում հատկապես անմոռաց է հարազատներից Լիպարիտի բաժանվելու սրտառուչ պահը, որ պատկերված է շատ մեծ վարպետությամբ:

Հառչեաց, գորդեակըն համբուրեաց, հանց որ գհեծելն ի լաց եհան. Ասաց. «Որդեա՛կ իմ Յովհաննես, Վասիլ եղբա՛յր իմ սիրական, Փառօք տիկի՛ն դու Մանանայ, իշխանուհի՛ արեւնըման, Հայեա՛ց պատկերս ի մանկութեան, որ տի մըտնում ի հող տապան»:

Հրաժեշտի այս գեղեցիկ եւ անկրկնելի պատկերը որքա՛ն հարազատ է մեր Էպոսի սիրված հերոսներից մեկի՝ Սասունցի Դավթի հրաժեշտին՝ կռիվ գնալուց առաջ («Սասունցի Դավիթ», Եր., 1981, էջ 225).

Իմ քուրե՛ր, մերե՛ր, իմ լա՛վ դրկիցներ, Մնացե՛ք բարով...

Օրինելով Աստծո անունն ու երկրպագելով Քրիստոսին՝ սպարապետն անվախ դուրս է գալիս թշնամու դեմ: Չափազանց հետաքրքիր ու պատկերավոր է ճակատամարտի տեսարանը: Զաչ Լիպարիտը, ինչպես Դավիթը՝

Յիշեաց գՔրիստոս ահեղածայն, կըտրեց ի անցաւ առիւծնըման. Չհեծելն արար փախըստական ի ի հետն երթայր ընծանըման: Հաշկարն արար դիզան դիզան, հանց որ արիւն գետեր ելան:

Եվ թվում է, թե հաղթանակի արդեն լիարժեք է, բայց հզոր զորավարի չափն-կալվող այդ հաջողությունից նեղսրտած Կոստանդին V-ը թշնամուն է գիշում իրեն վստահված կամուրջը:

Նայ թագաւորըն չարացաւ. գհեծելն առին ի ի յետ դարձան: Թուրքանց հեծելն յառաջ եկին, գկարմունճեն առին ու կանգնեցան: Անհավասար մարտից հոգնած ու հաղթանակած հերոսը վերադառնում է Սիս, բայց հանկարծ կամրջի մոտ անսպասե-

լիորեն շրջապատվում է դարանակալ թուրքերով, որոնք՝

Ըռումբ դըրին ամեն դիհացն, շատ խոցեին գյաղթող վըկայն. Հայեր ողորմ յաչ եւ ի ծախ՝ գոչ որ գըտաւ իւր օգնական:

Եվ մեր պատմության մեջ հայտնի շատ հերոսների նման նենգ դավադրության զոհ է դառնում Ստ խիզախ պաշտպան քաչ Լիպարիտը: Սիրելի սպարապետին դրվատելով՝ բանաստեղծն ընդգրկում է նրա անփոխարինելի դերը հայրենիքի պաշտպանության գործում, որովհետեւ նրանից հետո թշնամին անգթորեն կոտորում է ժողովրդին, ավերում եկեղեցիներն ու վանքերը, սպանում, գերեվարում երեց-ներին ու սարկավագներին: Եվ ողջ երկիրն ընկնում է թշնամու դաժան լծի տակ:

Թերեւս մեր Էպոսից որոշ մոտիվներ

Նշանավոր բանասեր Ն. Ակինյանը Լիպարիտի հետ նահատակվող Սիր Յոհաննիս նույնացրել է հերոսի որդի Հովհաննեսի հետ («Հանդես ամսօրյա», (տե՛ս Ն. Ակինյանի հրապարակումը, էջ 135): Սակայն այդ նույնացումը հավանական չի թվում, որովհետեւ Լիպարիտի որդին այն ժամանակ դեռեւս փոքրիկ երեխա է եղել: Կռվից առաջ հայրը նրան հրաժեշտ է տալիս այսպես:

Հառչեաց, գորդեակըն համբուրեաց, հանց որ գհեծելն ի լաց եհան:

Նա Լիպարիտի հետ չի սպանվել, նույնիսկ բավական ուշ՝ 1466 թ., դեռ կենդանի է եղել: Դա ապացուցվում է Ն. Եպս Ծովականի կողմից հայտնաբերված ձեռագրական մի հիշատակարան-հատվածով, որը, դժբախտաբար, կրճատված է: Ծովականը գրում է, որ «Սրուանձտեանցի Թորոս Աղ-

բեր տուն է հասնում եւ բաց անում բամբակը, «նայ ետես, որ եդեալ էր ի մէջ բամպակին քարս, որ կայր քառասուն լիտր» (նույն տեղում): Թագավորը խաբել էր Լիպարիտի քրոջը եւ Սարա ըմբիշին հաղթելուց հետո խոստացված բամբակի մէջ դրել քառասուն լիտրանոց քար (նույն տեղում): Ի դեպ, քարի իմաստն այլ կերպ է բացատրել բանասեր Գ. Աբգարյանը, որը գրել է. «Հայ մատենագրության մեջ «քար» բառը, բացի սովորական քարից, ունի նաեւ անգին քարի իմաստ, եւ Լիպարիտի գրույցում խոսքը վերաբերում է անգին քարին. թագավորը, աղջկա հզորությամբ հիացած, բամբակի պարկի մեջ 40 լիտրանոց անգին քար է դնում» (տե՛ս Գեւորգ Աբգարյան, «Հովհաննես Թկուրանցի. Տաղեր» գրախոսություն, «Տեղեկագիր», 1961, թիվ 3 էջ 97):

«Տաղ քաջի Լիպարտինը» հարուստ է

ՎԻՊԱԿԱՆ ՏԱՂ ԼԻՊԱՐԻՏ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ



պատկեր-համեմատություններով, որոնք շատ տպավորիչ են, հուզական ու ինքնատիպ: Ահա այդպիսի յուրօրինակ պատկերներ են հետեւյալ տողերը:

Չերթ սուրբ Սարգիս քաջն ի նըման, ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան, Զան ըզՄուշեղն այլ խիստ յաղթող, քան ըզՏրդատ Հայոց արքայն: Կամ՝ Արիւն հաներ գերթ գետ Ջիհան: «Հանց որ արիւն՝ գետեր ելան», -

գրում է բանաստեղծը եւ կենսատու

Ջահան գետի հետ միասին ավելի է ամբողջանում քաչ Լիպարիտի հերոսական նկարագիրը, ավելի են ընդգծվում նրա անօրինակ քաջագործությունները: Շատ բնորոշ են չարությամբ համակված եգիպտացիներին բնութագրող տողերը:

Չերթ քաջիսով տիկ չարեօք լըցան: Առավել ցայտուն եւ հաջողված է, թերեւս, հետեւյալ պատկերը:

Այն անօրէն չար կենդանին, որ եւ նոքա մահմետական, եւ ի յահէն քաչ Լիպարտին գիկն զուռ դողան ի առաջ չի գան:

«Տաղ քաջի Լիպարտինը» ժողովրդի հոգում ազատագրական կռիվ գաղափարը բորբոքող գեղեցիկ ու սրտահույզ մի գործ է, անմահացնող հիշատակն այն քաջ նահատակին, որը «պատմության մեջ փայլակի մը պես կերելի եւ կանցնի, բայց... պայծառ եւ բարեբախտ փայլակի մը պես» (Ղ. Ալիշան): Զաչ Լիպարիտի վսեմ, հայրենասեր եւ տիրաւոր հոգու վառ նկարագիրը, նրա նահատակման սրտաճմլիկ պատկեր սուգը, Ստ ավերում են ընդհանուր ժողովրդական սիրված հերոսի մահվան առթիվ, իրոք որ «պատկերներ են կտաւի վրայ առնուած թարմ գոյներով» (Ն. Ակինյան, Նշվ. հրապարակումը, «Հանդես ամսօրյա», էջ 135):

Վարդան ԵՂԻՃԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու



Վիրահայոց թեմի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ սույն թվականի հուլիսի 19-ին Թբիլիսիում, Ճայրահեղ ազգայնական տրամադրվածությամբ, շուրջ 50 անձի կողմից ոտնձգություն է

կատարվել Հավաքարի Սբ Էջմիածին եկեղեցու նկատմամբ, որի ընթացքում անարգալից ու հայիոյական արտահայտությունների ուղեկցմամբ ծեծի են ենթարկվել եկեղեցու սպասավոր Մանուկ քին. Չեյ-

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

նայանը, թեմի պաշտոնյաներ եւ այդ պահին եկեղեցում գտնվող հայ հավատացյալներ:

Մայր Աթոռ Սբ Էջմիածինն իր խոր մտահոգությունն է հայտնում կատարվածի առնչությամբ եւ դատապարտում ազգային թշնամանք եւ կրոնական անհանդուրժողականությունն հրահրող այս գործողությունը: Սադրիչ սույն ոտնձգությունը ցավալի հետեւանքն է վերջին տարիներին Վրաստանում տարբեր կազմակերպությունների ու անհատների, այդ թվում՝ վրաց որոշ հոգեւորականների կողմից տարածվող հակահայկական տրամադրությունների:

Ծայրահեղական նման դրսեւորումներն անհարիր են հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ոգուն, որը պատմական մեր ընդհանուր անցյալի թանկ ձեռքբերումներից է:


Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ակնկալությունն է, որ Վրաստանի իշխանությունները պատասխանատվության կենթարկեն եկեղեցու հանդեպ ոտնձգություն կատարած բոլոր անձանց եւ ապահովեն Վրաստանում Հայ Եկեղեցու եւ հայ համայնքի անվտանգությունն ու կյանքի բնականոն ընթացքը:

Կարգալույծ է հռչակվել Հակոբ աբեղա Գրիգորյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու՝ իր դիմումի համաձայն կարգալույծ է հռչակվել Հակոբ աբեղա Գրիգորյանը:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավագանի անունով՝ Արման Գրիգորյան:

Լրատվական կյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՎՈՐԳԻ



Նիկոլ Աղբալյան

Սկիզբը՝ թիվ 13

Ահա այս պայմաններում իրենց գործունեությունն են սկսում «Երեքը» եւ մյուս խմբակցությունները: Գրական երեկոներ, քննարկումներ, նոր գրականության կոչեր: Ըստ այդմ՝ անցել են նարեկացիները, անցնում է Տերյանը, կորչեն դասական արժեքները, մենք ենք, որ կանք: Ստեղծվում են գրական կազմակերպություններ, որոնցից կուսակցական գաղափարների կրողն ու անշեղ արտահայտիչն է դառնում հորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան (ԽՅԴԳԱ), ինչի մեջ մտնում են Չարյանը, Ալազանը, Վշտունին, Վանանդեցին, Դաբալյանը եւ ուրիշներ: Ազգային առողջ ուժերը (Մահարի, Բակունց, Արմեն եւ ուրիշներ) խմբավորվում են Չարենցի շուրջ եւ ստեղծում «Նույեմբեր» խմբակցությունը: 1927-ին «ուղեկից» գրողները Դ. Դեմիրճյանի եւ Ս. Չոբյանի ղեկավարությամբ ստեղծում են Աշխատավորական գրողների միությունը: 1926-ից աստիճանաբար աշխատանքներ են տարվում գրական տարբեր կազմակերպությունները միավորելու ուղղությամբ: Ի վերջո 1932-ին այս՝ արդեն իսկ վերամիավորված խմբակցությունները վերջնականապես միաձուլվում են, եւ 1934-ին ստեղծվում է հորհրդային Հայաստանի գրողների միությունը (ԽՅԳՄ): Հե-

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ XX ԴԱՐ

(մասնակի կրճատումներով)

տազայում՝ արդեն Հայաստանի գրողների միություն (ՀԳՄ): Այս ամենը մանրամասն ընթացք է, ինչին կանոնադրականը:

Իրականությունը եւ ազգային վիճակը պատկերացնելու համար վերականգնեք պատմական զարգացման իրողությունները:

1917 թ. հոկտեմբերի 25 (նոյեմբերի 7) - հոկտեմբերյան հեղաշրջում: Ռուսական բանակը լքում է Հայկական ճակատը:

Ստեղծվում է Անդրկովկասյան սեյմը (կոմիսարիատ):

1918 թ. հունիսի 1-ին Վեհիբ փաշայի առաջարկով Անդրկովկասյան սեյմն առանձնանում է Ռուսաստանից եւ որպես Անդրկովկասի Ֆեդերատիվ Հանրապետություն՝ գոյատևում 47 օր:

1918 թ. մայիսի 26-ին անկախություն է հռչակում Վրաստանը:

1918 թ. մայիսի 27-ին անկախություն է հռչակում Ադրբեջանը:

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանն ակամա դառնում է անկախ:

1918 թ., մայիսի 24-29 - հայ-թուրքական բախումներ, Սարդարապատի ճակատամարտը:

1918 թ. դեկտեմբեր - հայ-վրացական ընդհարումներ Ախալքալաքի եւ Լոռիի շրջանում, այդ տարածքներն անգլիացիների վերահսկողությամբ հռչակվում են չեզոք գոտի:

1919-ին անգլիացիները Ղարաբաղը հանձնում են Ադրբեջանին:

1919-ի օգոստոս-սեպտեմբեր - հայ-թուրքական կռիվներ Նախիջևանի համար: Այդ տարածքը հռչակվում է չեզոք գոտի:

1920-ի գարուն - հայ-ադրբեջանական կռիվներ Ղարաբաղի համար: Շուշիի հալածության քնաշենքում:

1920-ի սեպտեմբեր-հոկտեմբեր - թուրքերի առաջխաղացումը, Կարսի անկումը, Ալեքսպոլի անկումը:

1920-ի նոյեմբերի 29 - Հայաստանում խորհրդային իշխանության հռչակում: Եթե ռուսական կողմից բանակը չմտներ Հայաստան, բացառված չէին Թուրքիայի առաջընթացը եւ ամբողջ Հայաստանի բռնագրավումը Թուրքիայի կողմից:

1922 թ. - ԽՍՀՄ-ի հռչակումը: Անդրֆեդերացիայի կազմակերպումը Թիֆլիսի կենտրոնում:

1922-ին Հայաստանն ուներ 626 272 բնակիչ: 1926-ին՝ 709 742: Ըստ մեկ այլ տվյալի՝ 1926 թ. դեկտեմբերին՝ 880 464, 1928-ի հունվարի 1-ին՝ 922 805 («Խորհրդային Հայաստան», այսուհետեւ՝ ԽՀ, 1929, թիվ 78): 1930 թ. հունվարի 1-ին՝ 999 381: Երեւանը՝ 86 128, Լենինականը՝ 54.408, Ղարաբլիսան՝ 11 167:

Հայաստանի բնակչության տարեկան աճը կազմել է. 1927-ին՝ 4%, 1928-ին՝ 4.11%, սրանք աճի շատ բարձր ցուցանիշներ են: Երեւանը, որ դարձել էր Հայաստանի մայրաքաղաք ու մշակութային կենտրոն, դեռեւ «մայրաքաղաք» էր: 1924-ի հատկազոծվ Թամանյանը նախատեսում էր ապագայում բնակչության թիվը հասցնել 150.000-ի:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության տվյալները (ԽՀ, 1927, թիվ 129). Շուշիի շրջան, կենտրոնը՝ Շուշի - 12 000, Վարանդայի՝ կենտրոնը՝ Մարտունի - 28 000, Դիզակի՝ կենտրոնը՝ Հաղորթ - 28 000, Խաչենի՝ կենտրոնը՝ Ստեփանակերտ - 29 000, Ջրաբերդի՝ կենտրոնը՝ Մարտակերտ - 30 000: Ամբողջությամբ՝ 127 000 մարդ:

Այս 127 000-ից 9 000-ը՝ թուրք, 10 000-

ը՝ ռուս: 1928 թ. Ղարաբաղն ուներ 224 գյուղ, որից 12-ը՝ թուրքաբնակ, 4-ը՝ խառը, 1-ը՝ ռուսաբնակ, 1-ը՝ հունաբնակ, 206-ը՝ հայաբնակ (ԽՀ, 1928, թիվ 69):

1930 թ. «Խորհրդային Հայաստան» օրաթերթը (թիվ 74) ներկայացնում է Երեւանի բնակչության աճի հետեւյալ ցուցանիշները. 1923 թ. 47 521 հազար, 1924՝ 50 843, 1925-1926՝ 59 602, 1928-1929՝ 75 493, 1930՝ 86 126:

Անդրկովկասի բնակչությունը 1925 թ. հունվարի 1-ի դրությամբ (Պ. Աբեյյան, Հայաստանի տարածությունը եւ բնակչությունը, «Վերելք», Երեւան, 1924, թիվ 4-5). Վրաստան - 2 479 800, Ադրբեջան - 2 016 400, Հայաստան - 910 000:

Վրաստանում վրացիները կազմել են բնակչության 68.1%, հայերը՝ 12.0%, ադրբեջանցիները՝ 16.6%, այլազգիները՝ 3.3%:

Ադրբեջանում ադրբեջանցիները կազմել են բնակչության 56.0%, հայերը՝ 13.5%, այլազգիները՝ 30.5%:

Հայաստանում հայերը կազմել են բնակչության 86.0%, ադրբեջանցիները՝ 9.8%, այլազգիները՝ 4.2%:

Անդրկովկասում հայերի քանակը եղել է 1 952 350, ադրբեջանցիներինը՝ 1 300 100, այլազգիներինը՝ 702 900:

1926-ին Վրաստանի բնակչությունը եղել է 2 644 207, որից 207 018-ը՝ հայ («Լուսաբաց», Թիֆլիս 1931, թիվ 6, էջ 23):

Այլ տվյալներ: Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթը 1910 թվականի 4-րդ համարում տեղեկացնում է՝ Թուրքիայից 10 տարվա ընթացքում (1899-1908) ԱՄՆ են արտագաղթել 13 001 հայ, 4 881 հայուհի, ընդհանուր՝ 17 882 (արտատպությունները՝ «Փարոն», Մոսկվա, 1912, գիրք երրորդ):

2. Եսայանը «Գաղթականները» գրության մեջ անդրադառնում է այս հոսքին դեպի Նոր Աշխարհ («Հայ գրականություն», Կ. Պոլիս, 1911, թիվ 6):

1911-1913 թթ. Թուրքիայի թղթատարական եւ հեռագրական նախարար է եղել Ռսկան Մարտիկյանը, ով վարել է նաեւ Ելեմտական նախարարությունը («Շանթ», Կ. Պոլիս, 1913, թիվ 40):

Շարունակությունը՝ էջ 4


Բ. Ի. ՂԱՏԿՈՎ

Սկիզբը՝ թիվ 4-6, 8-10, 12

Այս առակի իմաստը, իսկ գլխավորապես՝ Փրկչի եզրափակիչ խոսքերի նշանակությունն առավել ճշգրիտ ըմբռնելու համար հարկ է նախ եւ առաջ իմանալ, թե ում եւ ինչ առնչությամբ այն ասվեց: Հիսուս Քրիստոսի պատմած չորս առակների մասին (որոնց թվում է եւ Անիրավ տնտեսի առակը), ասես որպես մեկնակետ, Ղուկաս ավետարանիչն սկսում է հետեւյալ խոսքերով. **«Եվ բոլոր մաքսավորներն ու մեղավորները Նրա մոտն էին, որպեսզի լսեն Նրան: Փարիսեցիներն ու օրենսգետները տրտնջում էին եւ ասում. «Ինչո՞ւ է սա ընդունում մեղավորներին եւ ուտում նրանց հետ»**» (Ղուկ. ԺԵ 1-2): Սրանից առաջ, երբ Տերը մաքսավորների եւ մեղավորների հետ նստած էր Մատթեոս մաքսավորի սեղանի շուրջ, փարիսեցիները նման կշտամբանքներով եւ դատապարտումով դիմել էին Հիսուսի աշակերտներին. **«Ինչո՞ւ է ձեր վարդապետը մաքսավորների ու մեղավորների հետ ուտում»:** Իսկ Հիսուսը, երբ լսեց, ասաց նրանց. **«Առողջներին բժիշկ պետք չէ, այլ՝ հիվանդներին... քանզի ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին»** (Մատթ. Թ 9-13, Մարկ. Բ 14-17, Ղուկ. Ե 27-32):

Այսպես՝ սա արդեն երկրորդ դեպքն էր, երբ փարիսեցիները եւ օրենսգետները բացահայտորեն քննադատում էին Հիսուսին՝ մեղավորների հետ հարաբերվելու համար: Առաջին դեպքում Տերը սահմանափակվեց Իր գալու նպատակի համառոտ ցուցումով, իսկ այժմ՝ Իր հասցեին վերստին կշտամբանքներ ու դատապարտումներ լսելուց հետո, Նա անհրաժեշտ գտավ Իր նպատակը փարիսեցիներին ու օրենսգետներին հասկացնել տալ առակներով: Այն, որ

առաջին երեք՝ կորած ոչխարի, կորած դրամի եւ անառակ որդու մասին առակներում Քրիստոսը դիմում է ոչ թե մաքսավորներին ու մեղավորներին, այլ՝ փարիսեցիներին ու օրենսգետներին, երեւում է հենց Ղուկաս ավետարանիչի խոսքերից. **«Փարիսեցիներն ու օրենսգետները տրտնջում էին եւ ասում. «Ինչո՞ւ է սա ընդունում մեղավորներին եւ ուտում նրանց հետ»:** Եվ Նա ահա պատմեց նրանց (փարիսեցիներին ու օրենսգետներին) սույն առակը (Ղուկ. ԺԵ 2-3): Իհարկե, այդ առակները լսում էին Հիսուսի շուրջը գտնվող բոլոր մաքսավորներն ու մեղավորները: Հենց նրանց էլ՝ որպես իրենց փրկությունը որոնողների, ի նկատի ուներ Տերը: Համենայն դեպս Նա առաջին երեք առակներով դիմում էր փարիսեցիներին եւ օրենսգետներին՝ որպես պատասխան նրանց կշտամբանքներին: Այս առակներով Քրիստոսն Իրեն կշտամբող փարիսեցիներին ու օրենսգետներին իրազնկորեն ցույց տվեց, թե ինչպես է գթառատ Աստված, առանց դիպվածորեն ճշմարիտ ուղուց շեղված մեղավորների կանչի ու խնդրանքի, գնում նրանց օգնելու եւ կործանումի տանող միջավայրից դուրս բերելու. Նա ընդառաջ է գնում նաեւ այնպիսի մեղավորների, որոնք գիտակցաբար են գնացել մեղսավոր ճանապարհով, ովքեր ցանկանում էին մեղք գործել, բայց հետո սթափվել, դատապարտել են իրենց անցյալը եւ որոշել ապրել ոչ այդ կերպ, այլ՝ ինչպես Աստված է կամենում: Եթե Ինքը՝ Աստված, այդպես է վարվում մեղավորների հետ, ապա անշուշտ Քրիստոսը եւս, Ով աշխարհի ուղարկվեց Աստծո կողմից ոչ թե դատելու, այլ փրկելու մեղավորներին, չէր կարող այլ կերպ վարվել:




Այդ երեք առակները, որոնք ուղղված էին փարիսեցիներին ու օրենսգետներին, պետք է որ ուրախացնեին Փրկչի շուրջը գտնվող մաքսավորներին ու մեղավորներին, պետք է որ նրանք համոզվեին, որ փրկությունը հնարավոր է եւ նրանց համար, ովքեր մերժված ու արհամարհված են: Իսկ ինչից սկսել: Ինչպե՞ս արժանանալ մեղքերի թողությանը: Անկասկած մաքսավորներին ու մեղավորներին հուզող այս հարցերին որպես պատասխան՝ Տերը պատմեց չորրորդ՝ անիրավ տնտեսի մասին առակը՝ անմիջականորեն ուղղված արդեն փարիսեցիներին ու օրենսգետներին՝ որպես նախապատում՝ նախորդ երեք առակներն ըմբռնելու համար:

Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ, և նրա մասին ամբաստանություն եղավ՝ որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը:

Պրոֆեսոր Բուտկելիչի՝ այս առակի բացատրությունից երեւում է, որ տնտեսը չի վատնել տիրոջ ունեցվածքը, այլ միայն ապրել է ճոխ, թույլ տվել ինքնագլուխ շորթումներ վարձակալներից: Հավանաբար նա ապրել է այնպես, ինչպես չէր կարող ապրել տիրոջից ստացած աշխատավարձով. սա հիմք է տալիս ենթադրելու, որ նա չէր գոհանում աշխատավարձով եւ ծախսում էր նաեւ այն եկամուտները, որ պատկանում էին տիրոջը: Ահա թե ինչու ամբաստանեցին նրան՝ տիրոջ ունեցվածքը վատնելու մեջ: Տերը հնարավոր է՝ հավատաց ամբաստանությանը, քանի որ մատնիչը պատահելի մեկն էր: «Տերը կանչեց նրան ու ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քո մասին, տո՛ւր քո տնտեսության հաշիվը, որովհետեւ այլեւս տնտես լինել չես կարող» (Ղուկ. ԺԶ 2): Անառարկելիորեն հավատալով մատնիչին՝ տերը ոչ միայն պահանջեց տնտեսից հաշվետվություն, այլեւ հայտարարեց պաշտոնից նրան հանելու մասին: Տնտեսը չփորձեց արդարանալ, որովհետեւ գիտակցում էր, որ վարձակալներից ստացած գումարների մի մասն ինքն իրավ յուրացրել էր: Չնայած վարձավճարի այդ չափը տիրոջ կողմից սահմանվածի հավելյալ մասն էր, սակայն հաշիվը տալիս, երբ դրան կցելու լինեի վարձակալական պայմանագրերը, կբացահայտվեի, որ տիրոջը հանձնել է եկամուտները ոչ այն չափով, ինչ չափով ստացել է վարձակալներից, այլ՝ ավելի պակաս: Մի խոսքով՝ եթե նա հաշվետվություն տալիս ներկայացներ բոլոր իրական պայմանագրերը, ապա կհաստատեր ամբաստանությունը եւ հազիվ թե կարողանար խուսափել պատասխանատվությունից:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ թիվ 13

Ի լրումն արդեն հիշատակված խնդրի՝ Արայի կինը վերածվել է մի չարացած ու փնթիլախ կիսահաշմանդամի: Կնոջ հիվանդագին վիճակի պատճառով ոչ միայն «Հին աշխարհից» բերված սքոլված վշտերն էին, այլև այն, որ նա կորցրել էր իր առաջին երկու զավակներին՝ աշխատանքի ել սիրո մասին եղած ամերիկյան պատկերացումների պատճառով: Այդ կորուստն էլ ավելի ցավագին էր դարձել, քանի որ նա չափազանց անհանդուրժողական անձնավորություն էր: Արայի կնոջ գլխով անցած փորձություններից տարիներ էին անցել, սակայն նա դեռևս զայրացած է իր ամուսնու վրա:

- Ձո՛ւն, ես տեսնում էի, թե ինչպես էր այդ ուժեղ, աստվածակերպ տղան դառնում անպիտանի մեկը: ... Քանի՜ անգամ էի աղաչել նրան՝ որեւէ բան ձեռնարկել: Թող նա ջարդեր նրա ոսկորները, միայն թե հեռու պահեր նրան այդ անբարոյական իռլանդիկից (տե՛ս Hagopian R., Wine for the Living, New York: Scribner, 1956, էջ 61):

ՌԻԶԱՐԴ ՆԱԳՈՓՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Երրորդ եւ ամենակրտսեր զավակը՝ Փոլը, ծնունդով լիցիումայն աշխատեցության պատճառով, հասկանում է, որ ինքը հայտնվել է անելանելի իրավիճակում: Ի պատիվ իրենց՝ հայր ու որդի ի վերջո ընդհանուր լեզու են գտնում՝ հարթահարելով իրենց ազգային նախապաշարմունքներն ամերիկյան սովորությունների հանդեպ: Նրանց հաշտությունն էլ ավելի է ամրապնդվում իտալացիների օգնությամբ, որոնք հայերի պես տարագրի կարգավիճակ ունեին Մասաչուսեթսի այդ համայնքում: Թե՛ Հագոփյանի

- Բարի՛ մարդիկ, երբ պայքարում եք բարի նպատակներով, դա չէք անում միայն ձեր բարոյության համար: Դուք պետք է ինչ-որ բան վերցնեք եւ ինչ-որ բան տաք ձեր շրջապատին: Օգնում եք աղքատ մարդուն՝ տալով նրան ձեր վերջին դրամը: Հարբած անձանքին տանում եք տուն եւ արժանանում նրա կնոջ հանդիմանությանը: Հասգստյան օրերին օգնում եք որեւէ մեկին կապել իր տան կտուրը, ինչի արդյունքում վայր եք ընկնում, վնասվում ե ձեր մեջքը, եւ երեք օր չեք կարողանում աշխատանքի գնալ: Փորձում եք պաշտպանել մի հարբած թափառաշրջիկի եւ ի պատասխան՝ ծեծվում եք: Եվ երբ փորձում եք իրարից բաժանել երկու կովոլ շների, որոնցից մեկը նեղն է ընկել, նա կծում է ձեր ոտը (տե՛ս Hagopian R., Նույն տեղում, էջ 11):

Նման անձնավորության առջեւ ծառացած գլխավոր խնդիրն այն չէ, որ նա տարբերի բարի նպատակները չարերից, այլ այն, որ իր ուժերի համար լավագույն կիրառությունը գտնի: Միայն այս եղանակով նա կարող է խուսափել իր անխոհեմության գոհը դառնալուց:

Ռիչարդ Հագոփյանի «Գինի ողջերի համար» վեպում կա եւս մեկ ուշագրավ կերպար. խոսքն Արայի լավագույն ընկերոջ՝ խոհարար Գարո Գարաբեդի մասին է, որը մշտապես պատրաստ է բարի խորհրդով օգնել նրան: Մի անգամ Գարաբեդը խորհուրդ է տալիս Արային մի գլխարկ գնել՝ իր տնոյն հայկական գլուխը թաքցնելու համար: Այնուհետեւ Գարաբեդն ասում է իր ընկերոջը. «Դու մտավախություն ունես, որ քեզ հետ ինչ-որ բան կարգին չէ: Գնիր այս գլխարկը եւ ազատվիր քո վախերից: Ես կօգնեմ քեզ: Միավորիր ընտանիքը: Եվ թող սա լինի ամեն ինչի սկիզբը» (տե՛ս Hagopian R., Նույն տեղում, էջ 75):

Ավելի ուշ արձագանքելով իր կողմից գնված գլխարկի հետ կապված բանաստեղծական հմայքին՝ Արան մտովի կրկնում է իր խոսքը, որ մտադիր էր ասել Փոլին: Թեեւ նա այդպես էլ ոչինչ չի ասում, սակայն խոսքերն արտահայտում են նրա առօրյա կյանքի չարտահայտված ձգտումները: Արայի գնած գլխարկը Սեթրակ Դինջյանի կողմից որպես Չատիկի նվեր գողացված գլխարկի պես դառնում է ինքնահարգանքի խորհրդանիշ: Այդ գլխարկն ավելին է, քան սոսկ բրդից ու մետաքսից կարված մի իր: Այն իրենով մարմնավորում է «շոշափելի գեղեցկություն, սիրո գեղեցկությունը, ընկերական տրամադրություններով լցված ընտանիք, որտեղ մարդուն չեն քննադատում նրանք, ովքեր ոչինչով չեն զբաղված եւ լոկ փնթիլախ են» (տե՛ս Hagopian R., Նույն տեղում, էջ 152-153): Արան եղբայրակցում է իր միտքը՝ ասելով. «Այս կաշվե երիզը ստեղծված է ճակատիս քրտինքը մաքրելու համար, եւ հանուն իմ գորշ կյանքի է, որ ինչ-որ մեկը պոկել է այս փոքր փետուրը մի բարձրաթռիչք թռչունի վրայից: Այս գլխարկը ստեղծվել է ի պատիվ մատուցողի համեստ աշխատանքի, որ ես հպարտությամբ կատարում եմ» (տե՛ս Hagopian R., Նույն տեղում, էջ 152-153): Ի վերջո Արան հասկանում է, որ ոչ մի գլխարկ չի կարող միավորել ընտանիքը, եթե տան մեջ սասանաներ են պտտվում: Ի հաստատումն ասվածի՝ վեպի ամենազավեշտական դրվագներից մեկում ընթերցողը տեսնում է, թե ինչպես է ստոր Աթանասը գողեցող մոտենում թաքցված գլխարկին եւ կովի թրիքով պատված կոշիկներով ծիսակարգային բժախնդրությամբ տրորում այն» (տե՛ս Hagopian R., Նույն տեղում, էջ 156):

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Սկիզբը՝ էջ 3

Խորհրդային գրականությունն առաջին իսկ քայլերից ուղղվում է Հայաստանի Հանրապետության ազգային գործիչների դեմ, կոչ է արվում մոռանալ Արեւմտյան Հայաստանը, Հայաստանի պատմական անցյալը, որովհետեւ ըստ խորհրդային գաղափարախոսության՝ մարդկության Նոր տոմարն սկսվում էր 1917 թ. Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից (հեղաշրջում), ինչը մինչեւ 1990 թվականն արտացոլվում էր օրացույցների վերելի առաջին տողում:

Հանձնարարությունը տրված էր եւ, ինչպես միշտ, ուներ իր պատրաստակամ հետետեղները: Ն. Չարյանը «Խուճապ» (1923) բանաստեղծության մեջ սարսափով փախչում է անցյալ կյանքից, ուր մեռնող գյուղերի երգը նրան ուզում է կանչել, տանել եւ հնի հետ մեկտեղ մահին տալ: Սրանք ոչ թե Ողիսեսին իրենց երգով դուրսը հուշկապարիկ- սիրեններն էին, այլ 1915-ին լքված հայրենի գյուղի ձայներ, որ իր հոր ձայնն էր, մոր ձայնն էր, հրդեհված ամբողջ գյուղի ձայնն էր: Անցյալից, ուր հայրենիք էր, նա սարսափով փախչում է: Սա ոչ թե վրիպում էր, այլ որոշակի ծրագիր, որ արտահայտվել է նաեւ նրա «Ով է հիշում» («Մուրճ», 1922, թիվ 2) բանաստեղծության մեջ.

Հե՛յ, դու հնացել ես,
Հիմա դու անցել ես,
Հիմա արդեն ծե՛ր ես,
Գյուղա՛կ իմ հայրենի -

Խառակոնի՛ս:

Ո՛վ է հիշում հիմա...
Ես հագիվ եմ հիշում
Որ քովքով կպած
Պառավների նման
Չրուցում են մուժում
Հնի՛ց, հնի՛ց, հնի՛ց...

Պրոլետարական յուրաքանչյուր գրողի, նրանց յուրաքանչյուր պարբերականի առաջին խնդիրը պայքարն էր ամեն տեսակի ազգային ոգեմբռնության հաղթանակի դեմ՝ լինի ազգային յուրահատկություն՝ պատմություն, հոգեբանություն, քաղաքական հարց թե ազգային արժեք՝ պատմական դեմքեր, աշխարհագրական վայրեր կամ ազգային գործիչներ:

«Պրոլետգրող» (1925, թիվ 1, 15 մայիս) մեկօրյա թերթը ձեւավորում է պրոլետգրողների նպատակները, անդրադառնում նրանց, ճշտում, թե ով է պրոլետգրողը, եւ ոչ մի տեղ՝ ոչ մի անդրադարձ ազգայինին, ընդհակառակը՝ միայն վանող ատելություն: Իսկ հայ պրոլետգրողների գործունեության ազդակները գալիս էին Ռուսաստանի գրողների համապատասխան կազմակերպությունից, որոնց պարբերականներում տպագրվող հոդվածները նախօրինակ էին նրանց հայ հետետեղների համար: Այդ հոդվածներից մի քանիսը նրանք թարգմանում էին ռուսերեն հրատարակվող թերթերից ու ամսագրերից՝ «Պրոլետարական կուլտուրա» («Պրոլետարական մշակույթ»), «Գրյադուշչեն» («Ապագա»), «Կուզնիցա» («Հարբեց»), «Լեֆ» (Արվեստի ձախ ճակատ) եւ այլն:

Ներկայացնում ենք 1920-1930 ականների «պրոլետարական» գրական մամուլը.

1. «Նոր խոսք», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1920,
2. «Նոր աշխարհ», ամսագիր, Թիֆլիս, 1922,
3. «Մուրճ», ամսագիր, Երեւան, 1922,
4. «Դարբնոց», ամսագիր, Թիֆլիս, 1922,
5. «Պայքար», ամսագիր, ԽՀ-ի հավելված, 1923,
6. «Մարտակոչ», ամսագիր, «Մարտակոչ»-ի հավելված, 1923,
7. «Զուրա», ամսագիր, Մոսկվա, 1923,
8. «Standard», ամսագիր, Մոսկվա, 1924,
9. «Դիրքերում», թերթ, Թիֆլիս, 1924,
10. «Վերելք», ամսագիր, Երեւան, 1924, 1926,
11. «Նոր ակոս», ամսագիր, Երեւան, 1924,
12. «Վիշկա», ամսագիր, Բաքու, 1925,
13. «Պրոլետգրող», մեկօրյա թերթ, Երեւան, 1925,
14. «Նոյեմբեր», մեկօրյա թերթ, Երեւան, 1925,
15. «Տպագրական բանվոր», երկշաբաթաթերթ, Երեւան, 1925,
16. «Գրական դիրքերում», ամսագիր, Երեւան, 1927,
17. «Լուսաբաց», Թիֆլիս, 1927,
18. «Վիշկա. 1917-1927», ժողովածու, Բաքու, 1927,
19. «Զուրա», ավանախ, Մոսկվա, 1928,
20. «Բանվոր», Փարիզ, 1928-1929,



Նաիրի Չարյան, գործ՝ Մ. Սարյանի

21. «Նոր ուղի», ամսագիր, Երեւան, 1929,
22. «Գրական շաբաթ», «Պրոլետար» թերթի հավելված, Թիֆլիս, 1929,
23. «Արվեստ ֆրոնտում», երկշաբաթաթերթ, ԽՀ-ի հավելված, 1930,
24. «Վերելք», նորագույն բանաստեղծության ընտիր նմուշների ժողովածու, «Պրոլետար» օրաթերթի հրատարակություն, Թիֆլիս, 1930,
25. «Պրոլետար», ամսագիր (մեկամսյա), Թիֆլիս, 1931,
26. «Գրական արշավ», «Պրոլետար»-ի հավելված, Թիֆլիս, 1931,
27. «Արշավ», ամսագիր, Թիֆլիս, 1932,
28. «Նոյեմբեր», հանդես, Երեւան, 1932,
29. «Գրական թերթ», Երեւան, 1932,
30. «Խորհրդային գրող», Երեւան, 1932,

31. «Բանվորական Երեւան», Երեւան, 1933-1934,
32. «Գրական սերունդ», ամսագիր, Երեւան, 1934,
33. «Երիտգրող», ամսաթերթ, Երեւան, 1934:

Հայ բանաստեղծների ներշնչանքի կենտրոնը Մոսկվան էր, որտեղից Մայակովսկին կոչ էր անում՝ ցրել հին բառակույտերի փոշին, վերացնել պոեզիայի, պրոզայի եւ «պրակտիկ լեզվի» միջեւ եղած տարբերությունը, նորոգել «լեզվի հնչյունների կազմությունը», «ռիթմի պոլիֆոնիան», նրբացնել լեզվական արտահայտությունը եւ մոտենալ «պրակտիկ խոսքին», «փողոցի ժարգոնին», «գիտության ճիշտ լեզվին» («Լեֆ», 1923, մարտ, ՄԷ, 1923, թիվ 101, 26 հունիս):

Շարունակելի
Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՀԱՅ ՄՏՔԻ ԵՎ ՈԳՈՒ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԿԱՅԱԿԱՆԸ ԴԱՐԱՆԻ ՂԵՄ՝ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ

Յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ ունի իր հոգեւոր-մշակութային խորհրդանշը: Հայ ժողովրդի համար այն, անկասկած, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանն է՝ հին ձեռագրերի եւ փաստաթղթերի պահպանման եւ ուսումնասիրման կենտրոնը եւ հայերեն ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցն աշխարհում:

Այն ստեղծվել է խորհրդային կարգերի հաստատման արշալույսին՝ 1921 թվականին՝ Էջմիածնի մատենադարանի հիմքի վրա եւ կոչվել կուլտուրպատմական ինստիտուտ: Սակայն «Մատենադարան» անվանված երեւոյթը հայոց աշխարհում ունեցել է շատ հին ավանդույթներ, որոնց մասին առաջին տեղեկությունները մեզ հասել են հինգերորդ դարից: Նույն դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցին վկայակոչում է, որ Էջմիածնի կաթողիկոսությանը կից գործել է գրատուն, որտեղ պահվել են հայերեն եւ հունարեն բազմաթիվ ձեռագրեր: Մաշտոցյան մատենագրության սկզբնավորումից ի վեր Հայաստանում եւ հայաշատ այլ վայրերում գրվել եւ ընդօրինակվել են հազարավոր ձեռագիր (գրչագիր) մատյաններ, որոնք խնամքով պահվել եւ պահպանվել են վանքերի եւ մենաստանների գրատներում եւ մատենադարաններում: Սակայն միջնադարից սկսած՝ հայոց ձեռագիր մատյաններին մշտապես սպառնացել է օտար նվաճողների ավարառության ու ոչնչացման անասնական վայրագ մոլուցքը:

Եվ հարյուրամյակներ շարունակ հայոց լեռնաշխարհի զանազան կողմերում չտեսնված բիրտության քանդվել, ավերվել են մեծ ու փոքր մատենադարանները, հրո ճարակ դարձել տասնյակ հազարավոր ձեռագիր մատյաններ: Հայ պատմիչներն արձանագրել են քոչվոր հորդանների կողմից հայոց հարուստ ձեռագրատները հիմնահատակ ավերելու, այրելու եւ կործանելու զարհուրելի բազմաթիվ փաստեր եւ իրողություններ: Միայն 1170 թվականին սելջուկ-թուրքերը Սյունյաց Բաղաբերդ ամրոցից կողոպտել եւ ոչնչացրել են շուրջ 10.000



ձեռագիր մատյան: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին վկայակոչում է, որ մոնղոլական նվաճողները 1242 թ. Կարին (Երզրում) քաղաքի մատենադարանից հափշտակել են մեծ թվով ձեռագիր մատյաններ: 1298 թ. Եգիպտական մամլուքների արշավանքների հետեւանքով մեծապես ավերվել է Կիլիկիայի հայոց թագավորության մայրաքաղաք Սսի պետական գանձատունը, որտեղ պահվում էին արժեքավոր ձեռագրեր:

Իսկ Էջմիածնի մատենադարանը, ըստ Ներսես Աշտարակեցու տեղեկությունների, վերջին անգամ ենթարկվել է ավերման ու կողոպուտի 1804 թվականին: Սակայն այս ամենով չի ավարտվում հայոց ձեռագրերի գեհենը: Քանզի առջեւում սպասվում էր հայ ժողովրդի երբեք չհասնող ամենամեծ ողբերգությունը՝ XX դարի առաջին ցեղասպանությունը: 1915-20-ական թթ. հիմնվել ավերվեցին Արեւմտյան Հայաստանի եւ Օսմանյան կայսրության այլ վայրերում գտնվող խոշոր կրթական ու մշակութային կենտրոնները, հրի մատնվեցին հազարավոր հայկական արժեքավոր, հազվագյուտ մատյաններ: Ոչ ոք, ոչ մի վիճակագրություն ճշգրիտ չի կարող տալ հայոց անգին ոչնչացված մատյանների իրական թիվն ու քանակը: Հայոց ցեղասպանությունը նաեւ հայոց գրի եւ գրքի մեծ եղեռն էր: Նույնիսկ այդ ամենաողբերգական դժնդակ պահին, այնուամենայնիվ, նույն այդ եղեռնագարկ ժողովրդի զավակներն ավերի եւ հրդեհների ճիւղներից փորձում էին փրկել հայոց դարավոր մատյանները, ժողովրդի իմաստության հանճարով ստեղծված գիրքն ու գիրը: Այդ կարգի բազմաթիվ օրինակներից է երկու հայ կանանց խիզախ, սիրալից վարքը, որոնք երկու փուլ կշռող ձեռագիր մատյանը (Մշո ճառքնորդը) 1915 թ. Մշո Ս. Առաքելոց վանքից շալակած (երկու մասի բաժանելով) հասցնում են Էջմիածին: Հայկական ձեռագրերը հայ ժողովրդի նման իրենց վրա կրում են արյան ու վերքի, կրակի ու կողոպուտի բազում հետքեր ու սպիներ:

Եղեռնից մազապուրծ՝ վերոնշյալ խիզախ վարքագծի տեր հայերի շնորհիվ հազարավոր հայկական ձեռագրեր փրկվեցին թուրք բարբարոսների սրից եւ հրից՝ հանգրվանելով աշխարհի տարբեր քաղաքներ՝ Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի, Բեյրութի, Լոնդոնի, Փարիզի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թիֆլիսի, Նոր

Ջուղայի թանգարաններում, գրատներում ու գրադարաններում: Այլ երկրների գրապահոցներում առ այսօր պահպանվում է շուրջ 31.000 հայերեն ձեռագիր:

Բարեբախտաբար հայերեն ձեռագրերի առյուծի բաժինը պահպանվում է մայր-հայրենիքում՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, որի հավաքածուն զգալիորեն հարստացավ 1920-30-ական թվականներին: Ձեռագրերի մի մասը բերվել էր Արեւմտահայաստանի տարբեր գավառներից (հատկապես Վասպուրականի եւ Տարսի), մյուս մասը՝ խորհրդային տարածքի հայկական վանքերից ու եկեղեցիներից, Մոսկվայի Լազարյան ճեմարանից, Թիֆլիսի հայոց ազգագրական ընկերությունից, Ներսիսյան դպրոցից, Թավրիզի հայոց առաջնորդարանից եւ այլ վայրերից:

1939 թվականին Մատենադարանն Էջմիածնից տեղափոխվում է Երեւան եւ տեղափոխվում հանրային գրադարանի շենքում: Անվանի ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով 1945 թվականից Երեւանում սկսվում է Մատենադարանի հիմնական շենքի կառուցումը եւ ավարտվում 1957 թվականին: 1959 թ. Մատենադարանը հանգրվանում է նորակառույց շենքում: Այդ պահից ի վեր Մատենադարանի գեղատեսիլ սույն կառույցը դառնում է մայրաքաղաքի խորհրդանշալից գոյությունների հոգատար ու պատասխանատու վերաբերմունքի շնորհիվ հայկական ձեռագրերի պահպանության ու հետազոտման գործը դրվում է միանգամայն պատշաճ բարձրության վրա: 1959 թվականից Մատենադարանին տրվում է գիտահետազոտական ինստիտուտի կարգավիճակ: Մինչեւ օրս Մատենադարանի գիտաշխատողների ջանքերով հրատարակվել է հայագիտական հարյուրավոր աշխատություն, որոնք ունեն գիտական մեծ արժեք:

Ձեռագրերի ուսումնասիրությունները կատարվում են ինստիտուտի գիտական մի շարք բաժիններում:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի առաջին տնօրենն է եղել անվանի հայագետ, ակադեմիկոս Լեւոն Խաչիկյանը, որը պաշտոնավարել է 1954-1982 թվականներին: Այնուհետեւ պաշտոնավարել է Խորհրդային Հայաստանի ճանաչված մտավորականներից մեկը՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Սեն Արեւշատյանը (1982-2007 թթ.): 2007 թ. հուլիսից հայագիտական այս կարեւոր հաստատությունը տնօրինում է բանասիրական գիտությունների դոկտոր, ճանաչված բանաստեղծ եւ թարգմանիչ Հրաչյա Թամրազյանը՝ նշանավոր գրականագետ Հրանտ Թամրազյանի որդին: Նրա պաշտոնավարության օրոք արդեն կատարվել են որոշակի ներքին բարեփոխումներ եւ կառուցվածքային փոփոխություններ: Մատենադարանի գիտատեխնիկական անձնակազմը եռապատկվել է, բացվել են շուրջ տասը նոր բաժին եւ ծառայություններ: Հիմնովին վերափոխվել է սարքավորումների, տեխնիկական միջոցների եւ տեխնոլոգիաների բազան: Ծարտարապետաշինարարական նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ կառուցվել եւ շարք է մտել նոր մասնաշենքը՝ գիտահետազոտական մի խոշորագույն համալիր՝ պահպանության եւ անվտանգության բացառիկ պայմաններով ու սպասարկման բարձր մակարդակով: Այն իր տեսակի մեջ լավագույններից մեկն է սույն տարածաշրջանում: Այս նոր մասնաշենքում ստեղծվել են բոլոր նպաստավոր պայմանները՝ գիտատեղծագործական արդյունավետ աշխատանքներ ծավալելու համար:

Շարունակությունը՝ էջ 7

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՅԻ

Եղիբ հետևող իմաստության հետ, եթե չուսանես՝ բժիշկ ես անգետ: Եղիբ իմաստուն՝ արա բանիս պետ: Գրքիս անունն է անգետի անպետ:

Ամիրդովլաթ Ամասիացի

Ամիրդովլաթ Ամասիացին (մոտ 1420/25-1496 թթ.) XV դարի ամենաբեղմնավոր հայ բնագետ-բժիշկն էր՝ բացառիկ մի մատենագիր բժշկագիտության մեջ: Ծնվել է Ամասիա քաղաքում (Արեւմտյան Հայաստան, Փոքր Հայք, Սեբաստիայի նահանգ): Նա հայրենի քաղաքից տեղափոխվել է տարբեր վայրեր եւ բնակություն հաստատել Կոստանդնուպոլսում, ուր բժշկական դասընթացներ է անցել հմուտ բժշկների մոտ: Բեղմնավոր բժշկի Ամիրդովլաթ անունը (կարողության տեր) մականուն է: Մահացել է 1496-ի դեկտեմբերի 8-ին Բրուսայում՝ իր հայրենիքում:

Ըստ Ամիրդովլաթի՝ «բժիշկը խելոք, հարգանքով, հնազանդ եւ խրատառու պետք է լինի եւ չլինի հարբեցող, ազահ, որեւէ անկնկալիքի սպասող: Աղքատասեր եւ

ողորմած, հավատարիմ եւ աստվածապաշտ, սուրբ մարդ պետք է լինի»: Նա, բացի մայրենի լեզվից, տիրապետել է 5 լեզվի՝ հունարենի, լատիներենի, պարսկերենի, թուրքերենի, արաբերենի, մանրակրկիտ ուսումնասիրել հին եւ միջնադարյան բժշկությունը: Ճանաչվել է որպես բժիշկ, աստղագետ ու փիլիսոփա, հրավիրվել Մահմեդ Բ սուլթանի պալատ՝ դառնալով նրա անձնական բժիշկը, ստացել պատվավոր տիտղոս՝ «գլխավոր վիրաբույժ-անկնաբույժ»: Նրան անվանել են նաեւ «բոստանջի փաշա»: Շաղի բեկի որդու՝ Վարդի խնդրանքով գրել է իր առաջին աշխատությունը՝ «Ուսումն բժշկութեան» (1459), որտեղ քննել է մարդու անատոմիայի, սաղմաբանության, հիգիենայի, ախտաբանության եւ դեղագիտության հարցերը: Այս գիրքը վերամշակել է, հարստացրել նոր բաժիններով եւ «Օգուտ բժշկութեան»-ը ավարտել 10 տարի հետո՝ 1469-ին, Ֆիլիպոպոլ, այժմ՝ Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում: Գրքի առաջին մասը նվիրված է մարդակազմությանը, մի գլուխը՝ դեղերին, երկրորդը՝ «Գիրք բժշկու-

թեան տումարի», որտեղ գլխի, ուղեղային ցավերն են, աչքի, ականջի, քթի, բերանի, ատամների, լեզվի, կոկորդի, թոքերի հիվանդությունները, դրանց պատճառագիտությունը՝ «պատճառ, որ տաք է լինի», «պատճառ, որ հով է լինի», կլինիկական պատկերը, հիվանդի բուժումը եւ խնամքը: 223 գլուխ ունեցող «Օգուտ բժշկութեան» (1469, հրտ.՝ 1940) աշխատությունում անտիկ բժիշկների՝ Հիպոկրատեսի, Գադիանոսի եւ արաբական բժշկության ճանաչված հեղինակությունների՝ Առ-Բազիի եւ Իբն-Սինայի դեղամիջոցներով են քննվել բոլոր հարցերը: Այդ սովորածավալ գրքում հեղինակը վերանայել է հայ ժողովրդական բժշկության դարերի փորձը դեղագիտության բնագավառում: Հայրենիքից հեռու ապրելով՝ ազգասեր բժիշկն իր բոլոր աշխատությունները՝ «Ուսումն բժշկութեան»-ը, դեղագործությանն ու դեղագիտությանը նվիրված «Ախրապատիս»-ը (Մ. Մաշտոցի Մատենադարան, ձեռագիր հմր 8871), 3500-ից ավելի դեղերի անվանումներ ունեցող «Անգիտաց անպետ»-ը (1482 թ., Բրիտանական թանգա-



րան, ձեռագիր հմր 3712) գրել է միջին հայերենով՝ իբրեւ դասագիրք եւ բժշկարան՝ օգտակար լինելու իր հայրենակիցներին եւ ուսանողներին: Միայն 5 լեզվով գրել է դեղերի անունները, որ հասկանալի լինեն շատերին: Նա բարեպաշտ մարդ էր:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 4


Ռիչարդ Հագոփյանի վեպի սյուժեում առանձնահատուկ կարևորություն ունի երկու գործող անձանց՝ Փոլի եւ վարսավիր Ջոն Տրիպոյի ընկերությունը, որն իբրեւ ենթատեքստ է ծառայում գլխավոր պատմության համար: Գրքի իտալացի հերոսը փորձում է իրականացնել իր երազանքները վոկալի հեռակա դասերի միջոցով: Փոլը, ոգեշնչվելով ծերունու համառությունից, հեղեղում է նրան իր հակասական զգացմունքներով: Հարկ է նշել, որ Փոլի ու Ջոնի ջերմ ընկերությունը բնավ միանշանակորեն չի ընդունվում նրա անբարո քեռու կողմից: Նա Փոլի ծնողների մեջ կասկածներ է սերմանում՝ կասկած նրա ու իտալացի վարսավիրի հարաբերությունների մաքրության հետ: Մի օր վարսավիր Տրիպոյն մահանում է սրտի կաթվածից, ինչի շնորհիվ Արան ձերբազատվում է իրեն համակած շփոթվածության ու հուզմունքի զգացումներից: Նա ի վերջո հաշտվում է որդու հետ: Մի երեկո, Ջոնի կերպարը տեսնելուց հետո, Փոլը «թափանցում է» իր հոր գորշ կյանքի մեջ: Արայի կյանքը զուրկ էր այն մեծ ձգտումներից ու տենչանքներից, որոնք առկա էին Ջոն Տրիպոյի կյանքում:

Նա, որդու կարեկցանքի շնորհիվ, վերագտնելով ինքն իրեն, հնարավորություն է ստանում մաքրելու իրազատ օջախը «չար ուժից»: Արան խարազանում է չարագործ Աթանասին՝ ասելով. «Դու կործանել ես իմ օջախը, իմ ընկերներին, իմ տղային, լավ մարդուն, իսկ այժմ իմ հերթն

է հասել: Դե՛, խորտակիր իմ կյանքը, ես այն քեզ եմ տալիս» (տե՛ս Hagopian R., նույն տեղում, էջ 280): Ի վերջո Արան իր օջախից վտարում է չարի մարմնավորում հանդիսացող Աթանասին եւ այսպիսով վերագտնում իր տեղն իբրեւ հայազգի պաշտելի հայր: Փոլը գովաբանում է նրան՝ ասելով. «Հայրի՛կ, դու ամենաուժեղ մարդն ես աշխարհում» (տե՛ս Hagopian R., նույն տեղում, էջ 283): Որդու այս խոսքերը փառավորում են Արային:

Ոչ պակաս կարեւոր է այն, որ Փոլը, լինելով տարագիրների երկրորդ սերնդի ներկայացուցիչ, փորձում է կամրջել իր կյանքի երկփեղկված հատվածները: Փոլի այս արարքը սիմվոլիկ կերպով արտահայտվում է այն ժամանակ, երբ նա պարզեւատրվում է մեղալով՝ Մասաչուսեթս նահանգի կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքի դեմ պայքարող ընկերության համար մի պատահա նկարելու համար: Դպրոցի տնօրենը մեղալը հանձնելու ժամանակ ասում է հետեւյալը. «Այստեղ մենք տեսնում ենք լոկ մեկ հաղթանակ, մեկ մեղալ եւ մեկ հաղթող: Կյանքն ինքնին բաղկացած է մրցություններից, պարտություններից ու հաղթանակներից: Պայքարե՛ք, պայքարե՛ք յուրաքանչյուր, եւ դուք կհաղթեք ամենակարեւոր մրցույթում, որը կոչվում է կյանք» (տե՛ս Hagopian R., նույն տեղում,

էջ 292): Տնօրենի ուղերձն ավելի ցցուն է դարձնում Փոլի հաղթանակն իր կյանքի առաջին մրցույթում, որի ընթացքում նա աչքի է ընկնում ստեղծագործական ձիրքով: Հայ երիտասարդի ունեցած հաղթանակն իրականում կոչված էր ծառայելու ոչ միայն անձնապես իրեն, այլեւ իր ծախողակ հայրենակիցներին եւ ողջ ամերիկյան հասարակությանը: Նշենք, որ Փոլի հաղթական տրամադրությունը խաթարվում է մի տհաճ միջադեպի պատճառով. երիտասարդի համադասարանցի խուլիգանները փորձում են խլել նրա վաստակած մեդալը, սակայն նրան օգնության է հասնում իտալացի վաղեմի ընկեր Մարիոն: Այս միջադեպն առիթ է դառնում նրանց ընկերության վերածնման համար: Երբ Փոլն իր մրցանակը տանում է տուն եւ ցույց տալիս մորը, իտալացին առանց հետին մտքի ասում է. «Զեռիս ասում էր, որ հայերը երբեք իտալացիների համար չեն կռվել, բայց իտալացիները կռվում են հայերի համար: Դա նշանակում է, որ հայերը խելացի են, այդ իսկ պատճառով նրանք մեղավներ են շահում» (տե՛ս Hagopian R., նույն տեղում, էջ 300): Ահա այսպես են օտարազգի մարդիկ, մասնավորապես՝ իտալացիները, գնահատում հայերին: Օտարների աչքից չի վրիպում նաեւ այն իրողությունը, որ ներկայումս հա-



յերն աչքի չեն ընկնում ռազմական հաղթանակներով, սակայն այժմ քաջարի հայ ռազմիկների հետնորդները հաղթանակներ են տանում խաղաղ մրցություններում, ինչը, թերեւս, ոչ պակաս կարեւոր է ու դրվատելի:

Ամփոփելով «Գինի ողջերի համար» վեպի վերլուծությունը՝ նշենք, որ այն սենտիմենտալ է եւ բաղկացած է բացարձակապես չկապակցված ենթասյուժեներից: Հագոփյանի այս գրքից կարծես հորդում են բարձրորակ տնական գինու ջերմությունն ու գրավչությունը: Հարի Քիշյանը հետեւյալ կերպ է բնութագրել Ռիչարդ Հագոփյանի վեպը. «Չնայած Հագոփյանի գիրքը զուրկ է աշխուժությունից եւ արկածախնդրությունից, սակայն դրանում առկա է մշտական

մտահոգություն՝ կապված սերնդետերունդ փոխանցվող ճշմարտության հետ» (տե՛ս Keyishian H., «Between Worlds»ՄԱ, Ararat 15 (summer 1964), էջ 31): Այս երկում արտահայտված գլխավոր ճշմարտությունն այն է, որ լոկ անհամբեր սպասումը չի կարող ծնողներին ազատագրել անցյալից: Երիտասարդները պետք է ծնող դառնան իրենց իսկ ծնողների համար, եւ դա պիտի արվի կարեկցանքի զգացումով ու առանց խարազանման: Հագոփյանի գրքի վերջում պարզվում է, որ անկուտրում սերը միակ ռազմավարությունն է, որը գլխավոր հերոսին՝ Արային, գործողությունների ազատություն է պարգեւում:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Զլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ թիվ 3-6, 8-13

Բրիտանացի հանրահայտ գրող Զլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է հառնակիչ կոչվող դեմոկրատիկ նամակները նրա զարմիկ Օ-ձինդրին: «Հառնակիչ նամակները» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

14

Իմ սիրելի Օձինդրիկ,

Խնամարկյալիդ մասին քո վերջին գեկույցում ամենատաքնապալիցն այն է, որ նա իր սկզբնական դարձին հատուկ վստահ որոշումներից ոչ մեկը չի կատարում: Ես այլեւս չեմ տեսնում մշտատեւ առաքինության առատ խոստումներ, նույնիսկ կյանքի համար «շնորհ» ընդունելու ակնկալիք չկա, բայց միայն ամենօրյա եւ ամենամյա փշրանքների հույս՝ ամենօրյա եւ ամենամյա փորձությունների դիմագրավման համար: Սա շատ վատ է:

Ես միայն մի բան եմ տեսնում, որ կարելի է անել այս պահին: Զո խնամարկյալը խոնարհվել է. դու նրա ուշադրությունը դարձրել ես դրան: Բոլոր առաքինություններն էլ պակաս սարսափելի են մեզ համար, երբ մարդը գիտակցում է, որ ունի դրանք, բայց հատկապես խոնարհության համար է սա ճիշտ: Այժմ, երբ նա աղքատ է հոգով, բռնի՛ր նրան եւ նրա մտքի մեջ դիր այս գոհ խորհուրդը՝ «Ինչ լավ է, ես խոնարհ եմ դառնում», եւ համարյա անմիջապես կհայտնվի հպարտությունը՝ նրա խոնարհության համար հպարտությունը: Եթե խնամարկյալը արթնանա՝ գիտակցելով վտանգը, եւ փորձի հպարտության այս նոր տեսակը խեղդել, նրան հպարտանալ տուր այս փորձի համար եւ այսպես շարունակ՝ քանի փուլով որ կամենում ես: Բայց շատ երկար մի՛ փորձարկիր սա, հնարավոր է՝ արթնացնես նրա հումորի եւ



չափավորության զգացումը, որի դեպքում նա պարզապես կծիծաղի քեզ վրա եւ կգնա քնելու:

Սակայն կան այլ շահավետ միջոցներ՝ նրա ուշադրությունը խոնարհության առաքինության վրա սեւեռելու համար: Այս առաքինությամբ, ինչպես եւ բոլոր մյուսների, մեր Թշնամին ցանկանում է մարդու ուշադրությունը շեղել սեփական եսից դեպի Նա եւ մարդու մեթավորները: Բոլոր նվաստացումների ու սեփական անձի հանդեպ ատելության վերջնականատակը բացառապես սա է. քանի դեռ դրանք այս արդյունքին չեն բերել, մեզ շատ քիչ վնաս են հասցնում, նույնիսկ կարող են բարիք գործել, եթե մարդուն զբաղված պահեն ինքն իրենով եւ հատկապես, եթե սեփական անձի հանդեպ ատելությունը դառնա ուրիշների անձերի հանդեպ ատելության, ուստի նաեւ անբարեհամբուրության, անպատկառության ու դաժանության մեկնակետ:

ԽԱՐՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նվիրվում է Զ. Թուկիեմին (անգլիացի գրող, բանաստեղծ, բանասեր)

Հետեւաբար, դու պետք է թաքցնես խնամարկյալից խոնարհության իրական վերջնականատակը: Թող նա դրա մասին մտածի ոչ թե որպես սեփական եսի մոռացության, այլ սեփական տաղանդների ու բնավորության վերաբերյալ որոշակի կարծիքի (այսինքն՝ ցածր կարծիքի): Որոշ տաղանդներ, ինչպես հասկանում եմ, նա իսկապես ունի: Նրա մտքում ամրապնդիր այն գաղափարը, թե խոնարհությունն այն է, որ ջանում ես հավատալ, թե այդ տաղանդները պակաս արժեքավոր են, քան ինչ որ նա հավատում է դրանց վերաբերյալ: Անկասկած, դրանք նրա հավատացածից պակաս արժեքավոր են, բայց կարեւորը դա չէ: Կարեւորն այն է, որ նրան ստիպես որեւէ կարծիք արժեւորել մի հատկության համար, որը տարբեր է ճշմարտությունից՝ այսպիսով ներմուծելով անազնվության տարր եւ նրան սրտանց հավատալ տալով մի բանի, որն այլապես սպառնում է առաքինություն դառնալ: Այս եղանակով մենք դրդել ենք հազարավոր մարդկանց մտածելու, թե խոնարհությունն այն է, երբ գեղեցիկ կանայք փորձում են հավատալ, թե իրենք տգեղ են, իսկ խելացի տղամարդիկ՝ փորձում հավատալ, թե հիմար են: Եվ քանի որ ինչին որ նրանք փորձում են հավատալ, որոշ դեպքերում անհեթեթություն է, նրանք չեն կարողանում հաջողությամբ հավատալ դրան, եւ մենք հնարավորություն ենք ստանում նրանց միտքը շարունակ իրենց անձի շուրջ պտտեցնելու, երբ ջանում են անհնարինին հասնել: Թշնամու ռազմավարությունը կանխատեսելու համար մենք պետք է նրա նպատակները հասկանանք: Թշնամին ուզում է մարդուն հասցնել մտքի այնպիսի վիճակի, որում նա կկարողանա հեղինակել աշխարհի լավագույն տաճարը եւ այն լավագույնը ճանա-

չել՝ հրճվելով դրա համար ո՛չ ավելի կամ պակաս կամ մեկ այլ կերպ, քան եթե այն մի ուրիշի կողմից ստեղծված լիներ: Թշնամին ուզում է, որ ի վերջո նա այնպես ազատվի իր օգտին եղած որեւէ կողմնակալությունից, որ կարողանա ուրախանալ իր սեփական տաղանդներով նույնքան անկեղծորեն ու գոհունակությամբ, որքան ընկերոջ տաղանդներով, կամ արեւածագով, փողով կամ ջրվեժով: Նա ցանկանում է, որ յուրաքանչյուր մարդ ի վերջո կարողանա փառահեղ ու գերազանց ճանաչել բոլոր արարածներին (նույնիսկ իրեն): Որքան հնարավոր է շուտ՝ Նա ցանկանում է սպանել նրանց անասնական եսասիրությունը, բայց վախենում եմ, թե նրա երկարածամկետ քաղաքականությունն այն է, որ նրանց մեջ մի նոր տեսակի եսասիրություն հաստատի՝ գթության ու գոհության զգացում բոլոր անձերի հանդեպ, ներառյալ իրենցը: Երբ նրանք իսկապես սովորեն սիրել իրենց ընկերներին, ինչպես իրենց անձը, նրանք թույլ կտրվի սիրել սեփական անձն այնպես, ինչպես ընկերներին: Որովհետեւ մենք երբեք չպետք է մոռանանք, թե ինչն է մեր Թշնամու ամենանողկալի եւ անբացատրելի հատկությունը. Նա իսկապես սիրում է Իր ստեղծած այդ անմազ երկրտանիներին եւ Իր աջ ձեռքով միշտ նրանց վերադարձնում է այն, ինչ վերցրել է Իր ձախ ձեռքով:

Ուստի նրա ամբողջ ջանքի նպատակը լինելու է մարդու միտքը հեռացնել սեփական անձի արժեքի առարկայից: Նա նախընտրում է, որ մարդ իր մասին մտածի որպես մեծ ճարտարապետի կամ մեծ պոետի, իսկ հետո մոռանա դրա մասին, քան երկար ժամանակ ծախսի ու ջանքեր թափի՝ փորձելով իր մասին մտածել, թե ինքը վատն է:

Շարունակությունը՝ էջ 7

Քլալի ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ էջ 5

Հետեւաբար, խնամարկյալիդ մեջ սնափառություն կամ կեղծ համեստություն ներարկելու քո ջանքերը թշնամու կողմից կարծանան այն հստակ հիշեցմանը, որ մարդուց սովորաբար կարծիք չի պահանջվում սեփական տաղանդների մասին, որովհետեւ նա շատ լավ կարող է շարունակել իր կարողության սահմաններում լավացնել իրեն, առանց որոշելու, թե իր հստակ տեղը Փառքի տաճարում որն է։ Դու պետք է ամեն գնով ջանաս վերացնել այս հիշեցումը խնամարկյալիդ գիտակցությունից։ Թշնամին նաեւ կշանա խնամարկյալիդ մտքում իրական ցույց տալ այն ուսմունքը, որը նրանք բոլորը խոստովանում են, բայց դժվարությամբ համոզվում իրենց սրտում՝ այն ուսմունքը, որ իրենց չէ, որ ստեղծել են իրենց, որ իրենց տաղանդները տրվել են իրենց, եւ որ իրենց նույն կերպ կարող էին նաեւ իրենց մագերի գույնով հայարտանալ։ Սակայն միշտ ու բոլոր միջոցներով՝ Թշնամու նպատակն է լինելու խնամարկյալիդ միտքը հեռու պահել այսպիսի հարցերից, իսկ քննել պիտի լինի նրանց միտքը սեւեռել դրանց վրա։ Թշնամին չի ուզում, որ մարդն անգամ իր մեղքերի մասին շատ մտածի. եթե նա զղջացել է դրանց համար, որքան շուտ իր ուշադրությունը հեռացնի դրանցից, այնքան ավելի կգոհացնի Թշնամուն։

Զո սիրառատ քեռի՝
ԽԱՆՆԱԿԻՉ

15

Իմ սիրելի Օշինդրիկ, Ես իհարկե նկատել եմ, որ մարդիկ իրենց այս եվրոպական պատերազմում, որը նրանք միամտորեն կոչում են «Պատերազմ», ժամանակավոր հանգիստ են վայելում, եւ ես չեմ գարմանում, որ համապատասխանաբար դադարել են նաեւ խնամարկյալիդ անհանգստությունները։ Մենք սա ուզում ենք քաջալերել, թե նրան անհանգստության մեջ պահել։ Տանջող վախն ու հիմար վստահությունը՝ երկուսն էլ մտքի ցանկալի վիճակներ են։ Նրանց միջեւ մեր ընտրությունը կարելու հարցեր է բարձրացնում։ Մարդիկ ժամանակի մեջ են ապրում, բայց մեր Թշնամին նրանց հավիտենության համար է նախատեսել։ Հե-

տեւաբար, ես հավատում եմ, որ Նա ցանկանում է, որ նրանք գլխավորապես երկու բանի վրա ուշադրություն դարձնեն՝ հենց հավիտենության եւ ժամանակի այն հատվածի, որը նրանք Ներկա են կոչում, որովհետեւ Ներկան այն կետն է, որում ժամանակը հարում է հավիտենությանը։ Մարդիկ միայն Ներկա պահի փորձառությունն ունեն Թշնամու՝ իրականության ամբողջական փորձառության դիմաց. միայն այդ ժամանակամիջոցում են նրանց առաջարկվում ազատություն եւ իրական պայմաններ։ Ուստի Նա այնպես պիտի անի, որ նրանք մշտապես հոգ տանեն կամ հավիտենության մասին (ինչը նշանակում է՝ Նրա մասին), կամ էլ Ներկայի՝ խոկալով կամ Նրա հետ իրենց հավիտենական միության, կամ բաժանման շուրջ, կամ էլ հնազանդվելով իրենց խղճի ներկա ձայնին, կրելով Ներկա խաչը, ընդունելով Ներկա շնորհը, գոհաւալով Ներկա հաճույքները։

Մեր գործը նրանց հեռացնելն է թե՛ հավիտենությունից, թե՛ Ներկայից։ Սա նկատի ունենալով՝ մենք երբեմն փորձության ենք մատնում մարդուն (ասենք՝ մի այրու կամ գիտնականի)՝ ապրելու Անցյալում։ Սակայն սա սահմանափակ արժեք ունի, որովհետեւ նրանք անցյալի որոշակի իրական գիտություն ունեն, որը հստակ բնություն ունի եւ դրանով նմանվում է հավիտենությանը։ Շատ ավելի լավ է նրանց ապրել տալ Ապագայում։ Կենսաբանական անհրաժեշտությունը նրանց բոլոր կրքերն արդեն իսկ մղում է այդ ուղղությամբ, այնպես որ Ապագայի վերաբերյալ միտքը հույս ու վախ է ծնում։ Այլեւ, այն հայտնի չէ նրանց, ուստի երբ մենք նրանց մտածել ենք տալիս դրա մասին, անիրական բաների մասին ենք մտածել տալիս։ Մի խոսքով՝ Ապագան բոլոր բաների մեջ ամենից քիչ է նման հավիտենությանը։ Դա ժամանակի ամենաժամանակավոր հատվածն է, որովհետեւ Անցյալը սառած է եւ այլեւս չի հոսում, իսկ Ներկան ամբողջապես բռնկված է հավիտենական ճառագայթներով։ Ուստի այն քաջալերություն-

նը, որ մենք տվել ենք այդ բոլոր մտային նախագծերին, օրինակ՝ «արարչագործական եվոլյուցիային», «գիտական հումանիզմին» կամ կոմունիզմին, որոնք սեւեռում են մարդկանց զգացումները Ապագային, ժամանակավորության ամենախորքում է գտնվում։ Ուրեմն բոլոր մոլություններն ապագայի մեջ են արմատացած։ Երախտագիտությունն անցյալին է նայում, սերը՝ Ներկային, մինչ վախը, ազահությունը, ցանկական կիրքը եւ սնափառությունը՝ ապագային։ Մի՛ կարծիր՝ ցանկական կիրքը բացառություն է։ Երբ Ներկա հաճույքը ժամանում է, մեղքը (միայն ինչն էլ մեզ հետաքրքրում է) արդեն ավարտված է լինում։ Հաճույքը պարզապես մասն է այն ընթացքի, որի համար մենք զղջում ենք եւ կցանկանայինք բացառել, եթե կարողանայինք առանց մեղքը կորցնելու դա անել. դա Թշնամու տրամադրած մասն է, ուստի Ներկայում է ապրվում։ Իսկ մեղքը, որ մեր նպաստն է, միտված է ապագային։

Վստահության համար Թշնամին ցանկանում է, որ մարդիկ նաեւ Ապագայի մասին մտածեն, բայց միայն այնքան, որքան պետք է այժմ ծրագրելու համար արդարության կամ ողորմության գործերը, որոնք, ամենայն հավանականությամբ, վաղը նրանց պարտականությունն են լինելու։ Վաղվա գործը ծրագրելը այսօրվա պարտականությունն է՝ թեպետ դրա նյութն ապագայից է վերցվում, սակայն դրա պարտականությունը, ինչպես բոլոր պարտականությունները, Ներկայում է։ Սա ծղոտի ճեղքում չէ։ Թշնամին չի ցանկանում, որ մարդիկ իրենց սիրտն Ապագային նվիրեն, իրենց գանձերն այնտեղ դնեն։ Իսկ մենք դա ենք ցանկանում։ Նրա ուզածն այն մարդն է, ով, ամբողջ օրն աշխատելով սերունդների բարօրության համար (եթե դա է նրա կոչումը), իր միտքը լվանում-մաքրում է դրանից՝ խնդիրը Երկնքին հանձնելով, եւ իսկույն վերադառնում համբերությանը կամ գոհությանը, որ պահանջվում է այն պահին, որում նա գտնվում է։ Իսկ մենք այնպիսի մարդ ենք



ուզում, ով տանջվում է Ապագայի վերաբերյալ։ Երկրի վրա գալիք դրախտի կամ դժոխքի տեսիլքներից հետապնդվելով, պատրաստ խախտելու Թշնամու պատվիրանները Ներկայում, եթե մենք նրան մտածել ենք տալիս, թե այսպես վարվելով կհասնի մեկին կամ կխուսափի մյուսից՝ կախված այն նախագծերի հաջողության կամ ձախողության հանդեպ նրա հավատից, որոնց վերջը նա չի տեսնելու իր կյանքի ընթացքում։ Մենք ուզում ենք, որ մարդկային ամբողջ ցեղը մշտապես ծիածանի հետեւից վազի՝ երբեք ազնիվ կամ բարի չլինելով, ոչ էլ երջանիկ այժմ, այլ իրեն Ներկայում տրված ամեն իրական պարգև միշտ պարզապես որպես վառելանյութ գործածի՝ ապագայի գոհասեղանին դնելու համար։

Հետեւաբար, ընդհանուր առմամբ, երբ մնացած բաները հավասար դիրքերում են, ավելի լավ է, որ խնամարկյալը այս պատերազմի վերաբերյալ լցվի անհանգստությամբ կամ հույսով (մեծ նշանակություն չունի, թե սրանցից որով), քան ապրի Ներկայում։ Սակայն «Ներկայում ապրել» արտահայտությունը լրողված իմաստ ունի։ Այն կարող է նկարագրել մի գործընթաց, որն Ապագայով իրապես նույնքան տարված է, որքան հենց անհանգստությունը։ Զո այդ մարդը կարող է եւ չանհանգստանալ Ապագայի համար, բայց ոչ թե որովհետեւ նրան Ներկան է հետաքրքրում, այլ որովհետեւ ինքն իրեն համոզել է, որ Ապագան բարենպաստ է լինելու։ Զանի դեռ դա է

նրա հանգստության իրական պատճառը, նրա հանգստությունը մեզ բարիք կգործի, որովհետեւ այն միայն է՛լ ավելի մեծ հիասթափություն է նախապատրաստում, հետեւաբար նաեւ ավելի շատ անհամբերություն, երբ խնամարկյալը տեսնի, որ իր սին հույսերը փշրվեցին։ Մյուս կողմից, եթե նա գիտակցում է, որ իրեն սարսափներ կարող են հասնել, եւ դրանք դիմավորելու համար առաքնություններ է խնդրում աղոթքով՝ միաժամանակ իրեն զբաղեցնելով Ներկայով, քանի որ այդտեղ եւ միայն այդտեղ են ամբողջ պարտականությունը, ամբողջ շնորհը, ամբողջ գիտությունը եւ ամբողջ հաճույքը բնակվում, նրա վիճակը շատ անցանկալի է եւ պետք է միանգամից հակագրոհի ենթարկվի։ Այստեղ նույնպես մեր Բանասեր Բագուկը լավ գործ է կատարել՝ խնամարկյալիդ վրա փորձարկիր «ինքնագոհություն» բառը։ Բայց իհարկե, ամենայն հավանականությամբ, խնամարկյալը «Ներկայում ապրում է» ո՛չ վերոնշյալ պատճառներով, այլ պարզապես որովհետեւ ամուր առողջություն ունի եւ իր աշխատանքից հաճույք է ստանում։ Դա, ուրեմն, պարզապես բնական երեւոյթ է։ Սակայն միենույն է, եթե ես քո տեղը լինեի, կվերացնեի դա. ոչ մի բնական երեւոյթ մեր օգտին չի գործում։ Եվ հետո, արարածն ինչո՞ւ պիտի երջանիկ լինի։

Զո սիրառատ քեռի՝
ԽԱՆՆԱԿԻՉ

Շարունակելի

Անգլերենից թարգմանությունը՝
Ս. Ս. Ի

ՀԱՅ ՄՏՔԻ ԵՎ ՌԳՈՒ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԿԱՅԱԿԱՆԸ Դարանի դեմ՝ Մառենադարան

Սկիզբը՝ էջ 5

Գործում է մեկ մեծ ընթերցասրահ, որից ամեն օր օգտվում է հարյուրավոր ընթերցող։ Գեղեցիկ, սյունազարդ, շատ ընդարձակ, հարմարավետ ընթերցասրահում գործում է լուսավորության, տաքացման եւ հովացման արդիական համակարգ, ընթերցողներին մատուցվում է անվճար համացանց եւ այլ ծառայություններ։ Սրան զուգահեռ գործում են ներքին ընթերցասրահներ, տարբեր նշանակության դահլիճներ։ Նոր մասնաշենքի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 2011 թվականի սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության օրը։ Հիանալի, նոր ու փայլուն ճարտարապետական ոճեր ու լուծումներ են առաջադրվել վեհատեսիլ տույն կառուցվող (ճարտարապետ՝ Արթուր Մես-

չյան)։ Նախկին հիմնական շենքը լիովին վերանորոգվել է, թարմացվել ու առավել գեղեցկատես դարձել։ Այն, ըստ էության, վերածվել է թանգարանի։ Եթե անցյալում գործում էր ընդամենը մեկ ցուցասրահ, ապա այժմ այցելուները հնարավորություն ունեն այստեղ գտնվող մշակույթի գանձերին ու մատուցներին ծանոթանալ տասնհինգ ցուցասրահներում։ Կարելու բարեփոխումների շարքում պետք է դիտարկել նաեւ այն նորույթը, որ փոխվել է ցուցադրությունների ներքին կառուցվածքը, այն դարձել է շարժունակ, իսկ հիմնական ցուցադրությանը զուգահեռ գործում են նաեւ թեմատիկ ցուցադրություններ։ Վերջիններս ժամանակ առ ժամանակ փոփոխվում են, լրացվում ու հարմարացվում նոր արժեքներով։



Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը վաղուց դարձել է այն ցանկալի տեսարժան վայրը, ուր գրեթե ամեն օր հյուրընկալվում են ամենատարբեր տարիքի, ազգության, մասնագիտության ու զբաղմունքի տեր մարդիկ աշ-

խարհի բոլոր ծայրերից։ Հատուկ կրթական պատրաստվածություն անցած էքսկուրսավարները նրանց սիրով ու շերմությամբ ներկայացնում են հայոց վաղնջական քաղաքակրթությունը խորհրդանշող հնագույն հուշար-

ձանները՝ հինգերորդ եւ վեցերորդ դարերի մագաղաթյա բեկորներ, իններորդ, տասներորդ դարերի արժեքավոր, նախաշագարդ ձեռագրեր, հասուն եւ ուշ միջնադարի՝ քարայրներում հայտնաբերված քարացած ձեռագրեր ու պատառիկներ։ Օտարագի այցելուն պարզ, հստակ ու տպավորիչ հասկանում եւ պատկերացնում է, որ հայերը, սկսած հինգերորդ դարից, գրել են մագաղաթների վրա, իսկ 10-րդ դարից գործածվել է թուղթը։ Մատենադարանում պահվող հայերեն հնագույն ամբողջական ձեռագիրը յոթերորդ դարում ընդօրինակած մագաղաթյա Ավետարան է, իսկ հնագույն հայերեն թղթյա ձեռագիրը գրվել է 981 թվականին։

Շարունակելի
Արմեն ԿԱՐՎԱՅԵՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՅԻ

Սկզբը՝ էջ 5

«Օգուտ բժշկութեան»-ի առաջաբանում գրում է, որ այն ստեղծել է ի հիշատակ իր եւ բոլոր քրիստոնյաների, հորդորել կարդացողին, որ շնչաւ. **«Տէ՛ր, ուղորմյա՛»,** որ Զրիստոսը հիշի մարդկանց երկրորդ գալստյան ժամանակ: «Օգուտ բժշկութեան»-ը քրիստոնյա բժիշկն սկսում է **«Յանուն Աստուծոյ գթածին եւ ուղորմածին, Որ է օրհնեալ յաւիտյանս ամեն»** խոսքերով: Գրքում տրված յուրաքանչյուր դեղից հետո գրում է՝ **«Օգտե Աստուծով»:** Մարդակազմության մեջ նա ասում է. **«Արարիչ Աստուած մարդու հինգ զգայարանները ստեղծել է այսպէս...»:**

XIV-XV դարերում հատկապէս արաբական բժշկության մեջ ընդունվում էին չորս գլխավոր տարրերը, որոնք փոփոխական ձեւով դեղերի մեջ մտնելով՝ նրանց հաղորդում են իրենց հատկությունները. հողը՝ իր հովությունը, ջուրը՝ իր խոնավությունը, օդը՝ իր չորությունը, հուրը՝ իր տաքությունը: Ըստ այդմ՝ դեղը հով է կամ գաղջ, չոր է կամ տաք: Առաջաբանում նա միջնադարյան բժիշկներին հատուկ համեստությամբ գրել է. «Այն էլ իմացիր, եղբայր, որ այս գիրքն իմ խոսքը չէ, այլ հին իմաստունների եւ իմաստուն բժիշկների եւ վերջին փիլիսոփաների, բոլոր բժիշկների խոսքն է, այն է՝ Զիպոկրատեսի եւ Գաղիանոսի, Ե՛ւ Արճիանեսի, Ե՛ւ Ֆլուսի, Ե՛ւ Ռուֆուսի... եւ շատ ուրիշների, որ այս գիտության ասպարեզում շատ են աշխատել»:

Ամասիացին նաեւ կյանքի դասեր է տալիս. «Ազահությունից բազում մարդիկ մեռան, իսկ զգուշավոր անձինք ավելացրեցին իրենց կյանքը: Զարգիր բժիշկներին քո պետքերի համար, որոնց



նույնպէս Աստված է ստեղծել, բայց բժշկությունը **Բարձրալից է եւ ժամանակը, եւ Նրա ձեռքից է քեզ բժշկություն գալիս, ուստի, Տիրոջն աղոթեցեք, որ հաջողի նրանց գործը»:**

«Օգուտ բժշկութեան»-ը ժամանակի լավագույն բժշկական երկերից է, որն ընդհանրացնում է միջնադարյան բժիշկների գիտելիքները՝ բժշկության տեսական եւ գործնական հարցերում: Մահճաբուծության բաժնում համակարգված են 200-ից ավելի հիվանդությունների, ջերմերի, բարորակ, չարորակ ուռուցքների, թունավորումների, մաշկային հիվանդությունների նկարագրությունները, դեղաբուժման ու սննդաբուժման մեթոդները: Ամասիացու աշխատությունների հիմքն օրգանիզմի ամբողջականությունն է. բո-

լոր օրգաններն ու հյուսվածքները, նրանց առանձնահատկությունները նպաստում են օրգանիզմի բնականոն գործունեությանը:

Նա նկարագրել է մարդու ներքին օրգանների, աչքի թաղանթների ձեւը, կառուցվածքը, դերն ու նշանակությունը: Ախտանշանակության, մասնավոր ախտաբանության եւ թերապիայի ասպարեզում կարելոք է զարկերակի ռիթմն ու հաճախականությունը, մեզի բաղադրության փոփոխությունների տվյալները տարբեր հիվանդությունների ժամանակ:

Մեծ բժշկապետի անձնական կյանքում տեղի են ունեցել դրամատիկ իրադարձություններ: Լինելով Մուհամմեդ II սուլթանի անձնական բժիշկը՝ մի կողմից ճանաչվել է որպէս մարդասեր եւ տաղանդավոր գիտնական, մյուս կողմից՝ քրիստոնյա բժիշկը նախանձի ու բացահայտ ատելության է արժանացել մուսուլմանների կողմից: «Օգուտ բժշկութեան» գրքի նախաբանում գրում է. «Շատ դժվարություններ ու փորձանքներ եմ քաշել անօրենների ու օտարագիների, դատավորների, թագավորների եւ իշխանների երեսից: Երկար տարիներ պանդուխտ եմ եղել. տեսել եմ ժամանակի չարն ու բարին, փորձանքների եմ հանդիպել, հարստություն ու աղքատություն եմ տեսել, թափառել եմ երկրից երկիր եւ իմ բժշկությունն եմ արել, շատ դեղ ու ճար եմ փորձել՝ ըստ իմ մացածի, ծառայել եմ հիվանդներին՝ մեծամեծներին ու աղքատներին, ծերերին ու մանուկներին...»: Ստիպված լինելով հեռանալ՝ Ամիրդովլաթն արտաքսման տասը տարիների ընթացքում բազմաթիվ հիվանդների է բուժել, միաժամանակ ծանոթացել այն երկրների դեղա-

բույսերին, որտեղ բնակվել է, փորձնական հետազոտություններ կատարել դեղաբուժության բնագավառում: 1466-67 թթ., երբ Բալկանյան թերակղզում մուլեզներ է ժանտախտը, նրան սուլթանը կրկին պալատ է վերադարձրել եւ հաստատել որպէս անձնական բժիշկ: Այդ ժամանակ դրսեւորվել է բժշկապետի սերը հայ մշակութային արժեքների եւ ձեռագրերի պահպանման հանդեպ: Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հմր 1921 ձեռագրում, որտեղ Արիստոտելի փիլիսոփայական երկերը եւ Գրիգոր Տաթեւացու մեկնություններն են, գրիչ Անդրեասը գրել է, որ այն ընդօրինակված է 1492-ին Ամասիայում՝ բժիշկ Ամիրդովլաթի ցանկությամբ, որը ներկայումս իր գրասիրությամբ **«Երկրորդ Պտղոմեոս»**-ն է: Նրա գրքերը դարեր շարունակ բժշկական գիտելիքների հանրագիտարան են եղել: Ամասիացին ստեղծել է հայ բժիշկների դպրոց, որը գոյատեւել է մի քանի դար շարունակ: Նրան հետեւել են Սեբաստիայի բժշկական դպրոցի ներկայացուցիչներ Զովասափը, Ասար եւ Բունիաթ Սեբաստացիները:

Աշխարհով մեկ ցրված են նրա բազմաթիվ ձեռագրերի ընդօրինակությունները, որոնք փաստում են այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերել են միջնադարյան բժիշկներն Ամասիացու ստեղծագործության նկատմամբ: Այսօր էլ մեծ է հետաքրքրությունն այս զարմանալի բժշկապետի երկերի հանդեպ: Վստահ ենք, որ այն չի դադարի հետագա սերունդների մոտ եւս, քազի Աստված բոլոր հիվանդությունների բուժումները դեղաբույսերի ձեւով տվել է մեզ, մնում է, որ դրանք ժամանակին, ճիշտ եւ գրագետ կարողանանք օգտագործել:

Օվսաննա ՄԱՂԱԹՅԱՆ

Բ. Ի. ՂԱՍԿՈՎ

Սկզբը՝ էջ 3

Նման դժվարին իրավիճակում հայտնվելով՝ տնտեսն սկսում է խորհել: Զավանաբար նա մտնել էր այն ամենը, ինչը չորթել էր՝ սեւ օրվա համար ոչինչ հետ չգցելով, որովհետեւ, հենց իր խոսքերով՝ նրան մնում էր կա՛մ հող մշակել, կա՛մ վերջին աղքատի նման մուրալ: Նման տխուր ապագայի հետ նա չէր կարող հաշտվել: Զող մշակել չէր կարող. հավանաբար նման աշխատանքը նրա ուժերից վեր էր, իսկ մուրալուց էլ ամաչում էր, որովհետեւ, ինչպէս բացատրում է Բուտկեւիչը, հրեաների համար սա խիստ անպատվաբեր էր:

- Խ՛նչ պետք է անեմ,- ահա այն հարցը, որն արդ զբաղեցրել էր տնտեսի միտքը:

Մարդը, որին պատուհասում է դժբախտություն, հաճախ է վերհիշում անցյալը՝ ցանկանալով բացահայտել այն, ինչն իրեն բերեց այդ ոչ ցանկալի իրավիճակին: Նա ափսոսում է, որ իր կյանքն այսպէս եւ ոչ թե այլ կերպ է դասավորվել: Նա զոջում է, որ չի ապրել ինչպէս հարկն է: Չոչնմիկն հետեւում է ցանկությունը՝ նախաձեռնելու որեւէ բան, որպէսզի չեզոքացնի պատուհասը, գտնելու վիճակից դուրս գալու լավագույն ելքը: Այսպէս ահա անիրավ տնտեսը, հայացք նետելով անցյալին, հիշեց, հավանաբար, թե ինչպէս էր նեղում վարձակալներին՝ նրանցից հավելյալ վճարումներ կորզելով, եւ ինչպէս էր յուրացնում այդ գումարները, որոնք խեղճ մշակները մեծ դժվարությամբ էին վաստակում: Եվ նրա մոտ կարող էր ցանկություն առաջանալ ոչ միայն արդարանալու տիրոջ առջեւ, այլեւ վարձակալների հանդեպ թույլ տված իր անբարոյ արարքները շտկելու: Եվ նա ծանր վիճակից դուրս գալու ելքը գտավ: Որպէսզի, համաձայն տիրոջ կամքի, կազմի կալվածքի կառա-

ԱՆԻՐՎՎ ՏՆՏԵՍԻ ՎՌՎԿԸ

վարման հաշվետվությունը, հարկ էր հաշվետվությանը կցել այնպիսի վարձակալական պայմանագրեր, որոնցում երեսար վարձավճարների այն չափերը, որ նշանակվել էին տիրոջ կողմից, իսկ դրա համար անհրաժեշտ էր արտագրել բոլոր պայմանագրերը եւ դրանցում նշանակալիորեն պակասեցնել վճարների չափերը: Այդպէս վարվելով՝ տնտեսը կարող էր ոչ միայն արդարանալ տիրոջ առջեւ, այլեւ իր կողմը գրավել վարձակալներին, որոնք այժմ պետք է վճարեին նախկինից ավելի պակաս: Այսպիսով մեծ ծառայություն մատուցելով վարձակալներին՝ տնտեսն ակնկալում էր նաեւ, որ նրանք շնորհակալ պիտի լինեն եւ չեն մերժի իրեն օգնություն ցուցաբերել, երբ նա թողնի կառավարումը: Այսպէս լուծեց տնտեսն իրեն հուզող խնդիրը եւ անմիջապէս անցավ իր ծրագրի իրագործմանը: Նա առանձին-առանձին իր մոտ կանչեց տիրոջ պարտապաններին եւ պատվիրեց արտագրել պայմանագրերը՝ նախկինների համեմատ զգալիորեն նվազեցնելով վարձավճարները: Նա, իհարկէ, չհայտնեց նրանց իր անսպասելի գթասրտության մասին՝ նրանց վրա թողնելով երախտագիտության խորագույն զգացում: Տնտեսը կանչեց վարձակալներին առանձին-առանձին, որովհետեւ նրանց միատեսակ չէր լավություն անում, այլ տարբեր՝ մեկի վարձավճարը պակասեցրել էր 50 տոկոսով, մյուսինը՝ 20 եւ այլն: Եթե նա բոլորին միասին կանչեր, ապա նրանց հանդեպ ոչ միարժեք բարեհաճությունը կարող էր շարժել ոմանց դժգոհությունը, ում նվազ էր գիշել: Եվ որպէսզի խուսափեր սպասելիք դժգոհություններից, պիտի մեկկի-մեկիկ բացատրեր իր այդպէս վարվելու պատճառը, ինչն ամենեւին չէր մտնում նրա հաշվարկների մեջ:



Որքան էլ տնտեսը թաքցրեց իր նպատակները թե՛ վարձակալներից եւ թե՛ իր տիրոջից, սակայն տերն ամեն բան իմացավ: Ընդունելով տնտեսից հաշվետվությունը եւ տեսնելով, որ այն կազմված է ըստ պատշաճին եւ համապատասխան փաստաթղթերով՝ տերը կարող էր ոչինչ չկռախել. եթե տնտեսի գործերը կարգին են, եթե մսխումներ չկան, ապա նշանակում է ամբաստանությունը կեղծ էր: Մատնիչին, ծայրահեղ դեպքում, սպասվում էր տիրոջ աչքից ընկնելը: Եվ նա, որպէսզի արդարանա, ստիպված էր լրացուցիչ իմանալ, թե ինչ է տնտեսը ձեռնարկել մսխումների պատասխանատվությունից խուսափելու համար: Ողջ ճշմարտությունն իմանալով՝ նա, իհարկէ, տեղեկացնում է տիրոջը (Ավետարանում չի ասվում,

թե ինչպէս իմացավ տերը տնտեսի արածների մասին. իմ կողմից ասվածը միայն իմ ենթադրությունն է, ի դեպ, ինչը միանգամայն բնական է - հեղ.):

Տնտեսն առակի տիրոջը ոչ մի վնաս չպատճառեց. նա ներկայացրեց հաշվետվությունը՝ պատշաճ բոլոր փաստաթղթերով. նրան պատասխանատվության ենթարկելու համար տերն օրինական ոչ մի հիմք չուներ: Իսկ հնարամտության կամ իմաստության համար նրան գովաբանել կարելի էր: **Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետեւ հնարամտությամբ գործեց** (Ղուկ. ԺՁ 8): Առակում ասված չէ, որ տերը հաշվետվությունից հետո ազատեց տնտեսին, սակայն կարելի է ենթադրել, որ չի ազատել, որովհետեւ նրա արարքը համարեց գովեստի արժանի:

Շարունակելի

Թարգմանությունը՝ Ա. ՄՍԱՍՐՆԹՅԱՆԻ

ԶՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Զիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Զրատարակիչ՝ «Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzian.am

astghikstam@gmail.com

web կայք՝ kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 1.8.2014 թ.

Տպագրանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ